

ՀԱՅՏԱՏՎԱԾ Է

Մաքսային միության հանձնաժողովի

2011 թվականի հոկտեմբերի 18-ի

թիվ 823 որոշմամբ



**ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

---

**ՄՄ ՏԿ 010/2011**

**Մեքենաների ու սարքավորումների անվտանգության մասին**

## Բովանդակություն

Նախաբան.....	4
Հոդված 1. Կիրառման ոլորտը .....	4
Հոդված 2. Սահմանումները .....	7
Հոդված 3. Շուկայում շրջանառության կանոնները .....	11
Հոդված 4. Մեքենաների եւ (կամ) սարքավորումների անվտանգության ապահովումը մշակման (նախագծման) ժամանակ .....	11
Հոդված 5. Մեքենաների եւ (կամ) սարքավորումների անվտանգության ապահովումն արտադրության, պահպանման, տրանսպորտային փոխադրման, շահագործման եւ օգտահանման ժամանակ .....	15
Հոդված 6. Անվտանգության պահանջներին համապատասխանության ապահովումը .....	18
Հոդված 7. Համապատասխանության գնահատումը.....	19
Հոդված 8. Համապատասխանության հավաստումը.....	20
Հոդված 9. Մեքենաների եւ (կամ) սարքավորումների հայտարարագրման կարգը .....	23
Հոդված 10. Համապատասխանության հայտարարագրի ընդունման համար հիմք հանդիսացող ապացուցողական նյութերի կազմը .....	27
Հոդված 11. Մեքենաների եւ (կամ) սարքավորումների սերտիֆիկացում անցկացնելու կարգը: .....	29
Հոդված 12. Արտադրանքի մակնշումը՝ Մաքսային միության անդամ պետությունների շուկայում շրջանառության միասնական նշանով .....	35
Հոդված 13. Երաշխիքային վերապահումը.....	36

Հավելված թիվ 1 «Մեքենաների եւ (կամ) սարքավորումների անվտանգության մասին» .....	37
Հավելված թիվ 2 «Մեքենաների եւ (կամ) սարքավորումների անվտանգության մասին» .....	56
Հավելված թիվ 3 «Մեքենաների եւ (կամ) սարքավորումների անվտանգության մասին» .....	76

## Նախաբան

1. Սույն Տեխնիկական կանոնակարգը մշակվել է «Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում տեխնիկական կարգավորման միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի նոյեմբերի 18-ի համաձայնագրին համապատասխան:

2. Սույն Տեխնիկական կանոնակարգը մշակվել է Մաքսային միության միասնական մաքսային տարածքում մեքենաների եւ (կամ) սարքավորումների մշակման (նախագծման), արտադրման, մոնտաժման, կարգաբերման, շահագործման, պահպանման, տրանսպորտային փոխադրման, իրացման եւ օգտահանման ժամանակ դրանց նկատմամբ կիրառման ու կատարման համար պարտադիր միասնական պահանջներ սահմանելու, Մաքսային միության միասնական մաքսային տարածքում մեքենաների եւ (կամ) սարքավորումների շրջանառության մեջ դրվող ազատ տեղաշարժն ապահովելու նպատակով:

3. Եթե մեքենաների եւ (կամ) սարքավորումների նկատմամբ ընդունվեն մեքենաների եւ (կամ) սարքավորումների նկատմամբ պահանջներ սահմանող՝ Մաքսային միության, Եվրասիական տնտեսական համայնքի (այսուհետ՝ ԵվրԱզԷՄ) այլ տեխնիկական կանոնակարգեր, ապա մեքենաները եւ (կամ) սարքավորումները պետք է համապատասխանեն Մաքսային միության, ԵվրԱզԷՄ-ի այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա:

### **Հոդված 1. Կիրառման ոլորտը**

1. Սույն Տեխնիկական կանոնակարգը տարածվում է Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվող մեքենաների եւ (կամ) սարքավորումների վրա:

2. Սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանվում են անվտանգության

նվազագույն անհրաժեշտ պահանջների մեքենաների եւ (կամ) սարքավորումների նկատմամբ դրանց մշակման (նախագծման), արտադրման, մոնտաժման, կարգաբերման, շահագործման, պահպանման, տրանսպորտային փոխադրման, իրացման եւ օգտահանման ժամանակ՝ մարդու կյանքը կամ առողջությունը, գույքը, շրջակա միջավայրը, կենդանիների կյանքն ու առողջությունը պաշտպանելու, դրանց նշանակության եւ անվտանգության վերաբերյալ սպառողներին մոլորության մեջ գցող գործողությունները կանխարգելելու նպատակներով:

3. Սույն Տեխնիկական կանոնակարգը տարածվում է այն մեքենաների եւ (կամ) սարքավորումների վրա, որոնց օգտագործման դեպքում բացահայտվել ու նույնականացվել են վտանգի տեսակներ, որոնց վերացման կամ նվազեցման նկատմամբ պահանջները սահմանված են թիվ 1 եւ 2 հավելվածների համաձայն:

4. Սույն Տեխնիկական կանոնակարգը չի տարածվում մեքենաների եւ (կամ) սարքավորումների հետեւյալ տեսակների վրա՝

- մեքենաներ եւ (կամ) սարքավորումներ, որոնք կապված են կապի ցանցերի գործունեության ամբողջականության եւ կայունության ու ռադիոհաճախականության տիրույթի օգտագործման հետ.
- մեքենաներ եւ (կամ) սարքավորումներ, որոնք կիրառվում են բժշկական նպատակներով եւ օգտագործվում պացիենտին անմիջական համան միջոցով (ռենտգենային, ախտորոշման, թերապեվտիկ, օրթոպեդիկ, ատամնաբուժական, վիրաբուժական սարքավորումներ).
- մեքենաներ եւ (կամ) սարքավորումներ, որոնք հատուկ նախագծված են ատոմային էներգիայի օգտագործման ոլորտում կիրառման համար: Ատոմային էներգիայի օգտագործման ոլորտում ընդհանուր արդյունաբերական նշանակության մեքենաների եւ (կամ) սարքավորումների վրա սույն Տեխնիկական կանոնակարգի գործողությունը տարածվում է միջուկային եւ ճառագայթային անվտանգության ապահովման վերաբերյալ պահանջներին չհակասող մասով:

- անվավոր տրանսպորտային միջոցներ՝ բացի դրանց վրա տեղադրված մեքենաներից եւ (կամ) սարքավորումներից.

- ծովային ու գետային տրանսպորտային միջոցներ (նավեր ու լողացող միջոցներ, այդ թվում՝ դրանց վրա օգտագործվող մեքենաներ եւ (կամ) սարքավորումներ).

- թռչող ու տիեզերական ապարատներ.

- երկաթուղային շարժակազմ եւ տեխնիկական միջոցներ, որոնք հատուկ նախագծված են երկաթուղային տրանսպորտում կիրառման համար, եւ մետրոպոլիտեն.

- ատրակցիոններ

- սպառագինություն եւ ռազմական տեխնիկա.

- մեքենաներ եւ (կամ) սարքավորումներ, որոնք նախատեսված են սահմանափակ ֆիզիկական հնարավորություններով անձանց կողմից շահագործման համար.

- գյուղատնտեսական եւ անտառային տրակտորներ ու կցորդներ՝ բացի դրանց վրա տեղադրված մեքենաներից եւ (կամ) սարքավորումներից.

- հորատման հարթակներ՝ բացի դրանց վրա օգտագործվող մեքենաներից եւ (կամ) սարքավորումներից.

5. Սույն Տեխնիկական կանոնակարգի գործողությունը տարածվում է արտադրական վտանգավոր օբյեկտներում կիրառվող մեքենաների եւ (կամ) սարքավորումների վրա:

6. Եթե մեքենաների եւ (կամ) սարքավորումների կիրառման արդյունքում առաջացող ռիսկերն ամբողջությամբ կամ մասամբ սահմանված են Մաքսային միության, ԵվրԱզԷՄ-ի այլ տեխնիկական կանոնակարգերով, ապա մեքենաները եւ (կամ) սարքավորումները պետք է համապատասխանեն Մաքսային միության, ԵվրԱզԷՄ-ի այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց

գործողությունը տարածվում է դրանց վրա:

7. Մեքենաների եւ (կամ) սարքավորումների նույնականացման ժամանակ սահմանվում է որոշակի մեքենաների եւ (կամ) սարքավորումների համապատասխանությունը նմուշին կամ դրանց նկարագրությանը. որպես այդպիսիք կարող են օգտագործվել սույն Տեխնիկական կանոնակարգի 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված ստանդարտները, դասակարգիչները, մասնագրերն ու գծագրերը, տեխնիկական պայմանները, շահագործման փաստաթղթերը:

8. Մեքենաների եւ (կամ) սարքավորումների որոշակի կատեգորիաների համար անվտանգության լրացուցիչ պահանջները սահմանված են թիվ 2 հավելվածի համաձայն:

## **Հոդված 2. Սահմանումները**

1. Սույն Տեխնիկական կանոնակարգում կիրառվում են հետեւյալ եզրույթները եւ դրանց սահմանումները.

«վթար»՝ մեքենայի եւ (կամ) սարքավորման ջարդվելը կամ վնասվելը, մեքենաների եւ (կամ) սարքավորումների շահագործման ընթացքում անկառավարելի պայթյունը եւ (կամ) վտանգավոր ու վնասակար նյութերի դուրսնետումը.

«թույլատրելի ռիսկ»՝ արտադրողի տեխնիկական ու տնտեսական հնարավորություններից կախված մեքենայի եւ (կամ) սարքավորման կիրառմամբ պայմանավորված ռիսկի աստիճան, որը համապատասխանում է արտադրանքի կենսական պարերաշրջանի բոլոր փուլերում ապահովվող անվտանգության մակարդակին.

«կենսական պարերաշրջան»՝ մեքենայի եւ (կամ) սարքավորման նախագծման սկզբից մինչեւ օգտահանման ավարտն ընկած ժամանակականությանը, որը ներառում է փոխկապակցված փուլերը (նախագծումը,

պատրաստումը, պահպանումը, մոնտաժումը, կարգաբերումը, շահագործումը, այդ թվում՝ արդիականացումը, վերանորոգումը, տեխնիկական ու սերվիսային սպասարկումը).

«միջադեպ»՝ մեքենայի եւ (կամ) սարքավորման խափանումը, տեխնոլոգիական գործընթացի ռեժիմից շեղումը.

«կրիտիկական խափանում»՝ մեքենայի եւ (կամ) սարքավորման խափանումը, որի հնարավոր հետեւանքներից է մարդու կյանքին կամ առողջությանը, գույքին, շրջակա միջավայրին, կենդանիների եւ բուսերի կյանքին ու առողջությանը վնաս հասցնելը.

«մեքենա»՝ մի շարք փոխկապակցված մասեր կամ հանգույցներ, որոնցից առնվազն մեկ մասը կամ մեկ հանգույցը շարժվում է համապատասխան շարժաբերերի, կառավարման շղթաների, էներգիայի աղբյուրների օգնությամբ, որոնք միացված են որոշակի կիրառման համար (օրինակ՝ նյութի մշակման, վերամշակման, տեղափոխման կամ փաթեթավորման համար).

«շարժական էներգետիկ միջոցներ»՝ տրակտորներ, ունիվերսալ էներգետիկ միջոցներ, ինքնաշարժ շասսիներ.

«նախատեսված ռեսուրս»՝ գումարային աշխատատեղություն, որը լրանալուց հետո մեքենայի եւ (կամ) սարքավորման շահագործումը պետք է դադարեցվի՝ անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի տեխնիկական վիճակում է այն գտնվում.

«աշխատատեղություն»՝ մեքենայի եւ (կամ) սարքավորման աշխատանքի տեղությունը կամ ծավալը.

«ծառայության նախատեսված ժամկետ»՝ մեքենայի եւ (կամ) սարքավորման շահագործման օրացուցային տեղությունը, որը լրանալուց հետո դրա շահագործումը պետք է դադարեցվի՝ անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի տեխնիկական վիճակում է այն գտնվում.

«պահպանման նախատեսված ժամկետ»՝ մեքենայի եւ (կամ) սարքավորման պահպանման օրացուցային տետղությունը, որը լրանալուց հետո դրա պահպանումը պետք է դադարեցվի՝ անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի տեխնիկական վիճակում է այն գտնվում.

«մեքենայի կիրառումը՝ ըստ նշանակության»՝ մեքենայի եւ (կամ) սարքավորման օգտագործումը շահագործման փաստաթղթերում արտադրողի կողմից նշված նշանակությանը համապատասխան.

«անվտանգության հիմնավորում»՝ ռիսկի վերլուծություն, ինչպես նաև կոնստրուկտորական, շահագործման, տեխնոլոգիական փաստաթղթերից վերցված անվտանգության ապահովման համար անհրաժեշտ նվազագույն միջոցների վերաբերյալ տեղեկություններ պարունակող փաստաթուղթ, որը կցվում է մեքենային եւ (կամ) սարքավորմանը դրա կենսական պարբերաշրջանի բոլոր փուլերում, եւ որի մեջ լրացվում են վերանորոգման աշխատանքներից հետո շահագործման փուլում ռիսկերի գնահատման արդյունքների մասին տեղեկությունները.

«սարքավորում»՝ ինքնուրույն օգտագործվող կամ մեքենայի վրա տեղադրվող տեխնիկական սարքվածք, որն անհրաժեշտ է՝ դրա հիմնական եւ (կամ) լրացուցիչ գործառույթները կատարելու, ինչպես նաև մի քանի մեքենա՝ մեկ համակարգում միավորելու համար.

«խափանում»՝ մեքենայի եւ (կամ) սարքավորման աշխատունակության վիճակի խախտում՝ նախագծման, արտադրման ժամանակ կամ վերանորոգման սահմանված գործընթացը չպահպանելու, շահագործման կանոններին կամ ձեռնարկին (հրահանգին) չհետեւելու դեպքում առաջացող կոնստրուկտորական խախտումների հետեւանքով.

«սահմանային վիճակ»՝ մեքենայի եւ (կամ) սարքավորման վիճակ, երբ դրա հետագա շահագործումն անթույլատրելի է կամ աննպատակահարմար կամ դրա աշխատունակության վերականգնումն անհնար է կամ աննպատակահարմար.

«միացվող մեքենա»՝ շարժունակ, կցվող, կիսակցվող, կախովի, կիսակախովի կամ շարժունակ էներգետիկ միջոցի վրա տեղադրվող մեքենա՝ նախատեսված արտադրության ու գյուղատնտեսական եւ այլ արտադրանքի առաջնային մշակման հետ կապված գործողությունների կատարման համար.

«մշակող (նախագծող)»՝ մեքենաների եւ (կամ) սարքավորումների նոր տեսակի ստեղծման, փորձանմուշներին առնչվող տեխնիկական փաստաթղթերի մշակման եւ փորձանմուշների արտադրման գործընթացն իրականացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձ.

«համակարգի մշակող (նախագծող)»՝ մեքենաների եւ (կամ) սարքավորումների (արտադրական պարբերաշրջանով փոխկապակցված տեխնոլոգիական գծերի) համակարգերին առնչվող նախագծային փաստաթղթերի ստեղծման գործընթացն իրականացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձ.

«գյուղատնտեսական մեքենատրակտորային ագրեգատ»՝ շարժունակ էներգետիկ միջոցի եւ գյուղատնտեսական տեխնոլոգիական գործառնությունների կատարման համար նախատեսված կցվող, կիսակցվող կամ տեղադրվող մեքենայի (կամ մեքենաների) համադրություն կազմող համալիր.

«համակարգ»՝ այնպիսի մեքենաների եւ (կամ) սարքավորումների ամբողջություն, որոնք կրնստրուկտիվ եւ (կամ) ֆունկցիոնալ առումով միացված են իրար՝ պահանջվող գործառույթների կատարման նպատակով.

«վտանգ»՝ մարդու կյանքին ու առողջությանը, գույքին, շրջակա միջավայրին վնաս հասցնելու հնարավոր աղբյուրը.

«վտանգավոր գոտի»՝ տարածք, որտեղ մարդու վրա ազդում են մեքենաներից կամ սարքավորումներից առաջացող վտանգները.

«ոլիսկ»՝ վնաս հասցնելու հավանականության եւ այդ վնասի՝ մարդու կյանքի կամ առողջության, գույքի, շրջակա միջավայրի, կենդանիների եւ բուսերի կյանքի կամ առողջության վրա հետեւանքների համադրությունը:

### **Հոդված 3. Շուկայում շրջանառության կանոնները**

1. Մեքենաները եւ (կամ) սարքավորումները դրվում են շրջանառության մեջ սույն Տեխնիկական կանոնակարգին, ինչպես նաև Մաքսային միության, ԵվրԱզԷՄ-ի այն մյուս տեխնիկական կանոնակարգերին համապատասխանելու դեպքում, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա, եւ պայմանով, որ դրանք անցել են սույն Տեխնիկական կանոնակարգով, ինչպես նաև Մաքսային միության, ԵվրԱզԷՄ-ի այն մյուս տեխնիկական կանոնակարգերով սահմանված՝ համապատասխանության հավաստման ընթացակարգեր, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա:

Այն մեքենաները եւ (կամ) սարքավորումները, որոնց համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին հաստատված չէ, չպետք է մակնշվեն Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով, եւ չի թույլատրվում Մաքսային միության միասնական մաքսային տարածքում դրանք դնել շրջանառության մեջ:

### **Հոդված 4. Մեքենաների եւ (կամ) սարքավորումների անվտանգության ապահովումը մշակման (նախագծման) ժամանակ**

1. Մեքենայի եւ (կամ) սարքավորման մշակման ժամանակ պետք է նույնականացվեն վտանգի հնարավոր տեսակները կենսական պարբերաշրջանի բոլոր փուլերում:

2. Վտանգի նույնականացված տեսակների համար ոխսկի գնահատումն անցկացվում է հաշվարկային, փորձարարական, փորձագիտական եղանակով կամ նույնանման մեքենաների եւ (կամ) սարքավորումների շահագործման տվյալների համաձայն: Ոխսկի գնահատման մեթոդները կարող են սահմանվել սույն Տեխնիկական կանոնակարգի 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված

ստանդարտներով:

3. Մշակման (նախագծման) ժամանակ պետք է որոշվի ու սահմանվի մեքենայի եւ (կամ) սարքավորման համար թույլատրելի ռիսկը: Ընդ որում, սահմանված ռիսկին համապատասխանող՝ անվտանգության մակարդակը ապահովվում է՝

- գիտահետազոտական ու փորձարարական-կոնստրուկտորական աշխատանքների լրիվությամբ.

- սահմանված կարգով ստուգված մեթոդիկաների վրա հիմնված անհրաժեշտ համալիր հաշվարկների ու փորձարկումների անցկացմամբ.

- մեքենաների եւ (կամ) սարքավորումների առանձին տեսակներում կիրառվող նյութեղենի ու նյութերի ընտրությամբ՝ կախված շահագործման պարամետրերից ու պայմաններից.

- մշակողի (նախագծողի) կողմից սահմանային վիճակների չափորոշիչների սահմանմամբ.

- մշակողի (նախագծողի) կողմից ծառայության նախատեսված ժամկետների, նախատեսված ռեսուրսների, տեխնիկական սպասարկման, վերանորոգման եւ օգտահանման ժամկետների սահմանմամբ:

- մեքենաների եւ (կամ) սարքավորումների հնարավոր կանխատեսելի ոչ ճիշտ օգտագործման հետ կապված բոլոր վտանգների բացահայտմամբ.

- մեքենաների եւ (կամ) սարքավորումների օգտագործման սահմանափակմամբ:

4. Եթե գնահատված ռիսկն ավելի բարձր է, քան թույլատրելի ռիսկը, ապա այն նվազեցնելու համար պետք է փոփոխվի մեքենայի (կամ) սարքավորման նախագիծը, ընդ որում, աշխատակազմի միջնորդությունը մեքենայի (կամ) սարքավորման բոլոր աշխատանքային ռեժիմներին բացառվում է (եթե միջնորդությունը նախատեսված չէ շահագործման ծեռնարկով (հրահանգով)):

5. Նախագծի փոփոխման միջոցով մեքենայի եւ (կամ) սարքավորման՝ թույլատրելի ռիսկը սահմանող տեխնիկական բնութագրերին համապատասխանելու անհնարինության, ինչպես նաև տնտեսական աննպատակահարմարության դեպքում շահագործման ձեռնարկում (հրահանգում) նշվում է տվյալ մեքենայի եւ (կամ) սարքավորման կիրառման պայմանները սահմանափակող եւ անվտանգության ապահովման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության մասին նախազգուշացնող տեղեկատվություն:

6. Մեքենաների եւ (կամ) սարքավորումների մշակման (նախագծման) ժամանակ պետք է սահմանվեն ֆիզիկական գործոնների (աղմուկի, ենթածայնի, օդային եւ հպումային ուժությանի, տեղային եւ ընդհանուր թրթուման, էլեկտրամագնիսական դաշտերի), ինչպես նաև վտանգավոր ու վնասակար նյութերի արտազատման մակարդակները:

7. Մեքենայի եւ (կամ) սարքավորման մշակման ժամանակ պետք է մշակվի անվտանգության հիմնավորում:

Մեքենայի եւ (կամ) սարքավորման անվտանգության հիմնավորման բնօրինակը պահպում է մշակողի (նախագծողի) մոտ, իսկ պատճենը՝ մեքենաների եւ (կամ) սարքավորումներն արտադրողի ու մեքենաները եւ (կամ) սարքավորումները շահագործող կազմակերպությունում:

8. Շահագործման ձեռնարկի (հրահանգի) մշակումը մեքենայի եւ (կամ) սարքավորման մշակման (նախագծման) անբաժանելի մասն է: Շահագործման ձեռնարկը (հրահանգը) ներառում է՝

- տեղեկություններ մեքենաների եւ (կամ) սարքավորումների կոնստրուկցիայի, գործողության սկզբունքի, բնութագրերի (հատկությունների) վերաբերյալ.

- ցուցումներ մեքենայի եւ (կամ) սարքավորման հավաքակցման կամ հավաքման, կարգաբերման կամ կարգավորման, տեխնիկական սպասարկման ու վերանորոգման մասին.

- ցուցումներ մեքենայի եւ (կամ) սարքավորման օգտագործման մասին եւ միջոցներ՝ ուղղված անվտանգության ապահովմանը, որոնց անհրաժեշտ է հետեւել մեքենայի եւ (կամ) սարքավորման շահագործման ժամանակ՝ ներառյալ շահագործման մեջ դնելը, ըստ նշանակության կիրառելը, տեխնիկական սպասարկումը, վերանորոգման բոլոր տեսակները, պարբերաբար ախտորոշումը, փորձարկումները, տրանսպորտային փոխադրումը, փաթեթավորումը, կոնսերվացումն ու պահպանման պայմանները.

- Նախատեսված ցուցանիշները (պահպանման նախատեսված ժամկետը, ծառայության նախատեսված ժամկետը եւ (կամ) նախատեսված ռեսուրսը՝ կախված կոնստրուկտորական առանձնահատկություններից). Նախատեսված ցուցանիշները (նախատեսված ռեսուրսը, պահպանման ժամկետը, ծառայության ժամկետը) լրանալուն պես մեքենան եւ (կամ) սարքավորումը հանվում են շահագործումից, եւ ընդունվում է որոշում դրանք վերանորոգման ուղարկելու, օգտահանելու, ստուգելու եւ նոր նախատեսված ցուցանիշներ (նախատեսված ռեսուրս, պահպանման ժամկետ, ծառայության ժամկետ) սահմանելու վերաբերյալ.

- Կրիտիկական խափանումների ցանկը, անձնակազմի հնարավոր սխալ գործողությունները, որոնք հանգեցնում են միջադեպի կամ վթարի.

- անձնակազմի գործողությունները միջադեպի, կրիտիկական խափանման կամ վթարի դեպքում.

- սահմանային վիճակների չափորոշիչները.

- ցուցումներ՝ շահագործումից եւ օգտահանումից հանելու մասին.

- տեղեկություններ սպասարկող անձնակազմի որակավորման վերաբերյալ:

9. Եթե մեքենան եւ (կամ) սարքավորումը նախատեսված են ոչ պրոֆեսիոնալ օգտագործողների կողմից շահագործման համար, ապա շահագործման ձեռնարկում (հրահանգում) պետք է հաշվի առնվեն այդպիսի

օգտագործողների գիտելիքները, կարողություններն ու փորձը:

**Հոդված 5. Մեքենաների եւ (կամ) սարքավորումների անվտանգության ապահովումն արտադրության, պահպանման, տրանսպորտային փոխադրման, շահագործման եւ օգտահանման ժամանակ**

1. Մեքենայի եւ (կամ) սարքավորման արտադրության ժամանակ պետք է ապահովի դրանց համապատասխանությունը նախագծային (կոնստրուկտորական) փաստաթղթերի եւ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

2. Մեքենայի եւ (կամ) սարքավորման արտադրության ժամանակ արտադրողը պետք է կատարի բոլոր համալիր միջոցառումները նախագծային (կոնստրուկտորական) փաստաթղթերով սահմանված անվտանգության ապահովման ուղղությամբ, ընդ որում, պետք է ապահովի հսկողության հնարավորությունը այն բոլոր տեխնոլոգիական գործառնությունների նկատմամբ, որոնցից կախված է անվտանգությունը:

3. Մեքենայի եւ (կամ) սարքավորման արտադրության ժամանակ պետք է անցկացվեն նախագծային (կոնստրուկտորային) փաստաթղթերով նախատեսված փորձարկումներ:

4. Մեքենայի եւ (կամ) սարքավորման արտադրության ժամանակ պետք է ապահովեն նախագծային (կոնստրուկտորական) փաստաթղթերով սույն Տեխնիկական կանոնակարգին համապատասխան սահմանված պահանջները՝ կիրառվող տեխնոլոգիական գործընթացների ու հսկողության համակարգի հաշվառմամբ: Արտադրողն անցկացնում է մեքենայի եւ (կամ) սարքավորման ռիսկի գնահատում՝ մինչեւ այն շրջանառության մեջ դնելը:

5. Մեքենայի եւ (կամ) սարքավորման արտադրության ժամանակ նախագծային (կոնստրուկտորական) փաստաթղթերից շեղումները պետք է համաձայնեցվեն մշակողի (նախագծողի) հետ: Ըստ համաձայնեցված

նախագծային (կոնստրուկտորական) փաստաթղթերի՝ արտադրված մեքենայի եւ (կամ) սարքավորման կիրառման ռիսկը չպետք է լինի ավելի բարձր, քան մշակողի (նախագծողի) կողմից սահմանված ռիսկը:

6. Մեքենայի եւ (կամ) սարքավորման արտադրողը պետք է ապահովի մեքենայի եւ (կամ) սարքավորման շահագործման ձեռնարկի (հրահանգի) առկայությունը:

7. Մեքենայի եւ (կամ) սարքավորման վրա պետք է լինեն հստակ ու չջնջվող նախազգուշացնող գրություններ կամ վտանգի տեսակների մասին նշաններ:

8. Մեքենայի եւ (կամ) սարքավորման վրա պետք է լինի լավ տեսանելի, հստակ ու չջնջվող նույնականացնող գրություն, որը պետք է պարունակի՝

- արտադրողի անվանումը եւ (կամ) դրա ապրանքային նշանը.
- մեքենայի եւ (կամ) սարքավորման անվանումը եւ (կամ) նշանը (տիպը, մակնիշը, մոդելը (առկայության դեպքում)).
- արտադրության ամիսն ու տարին:

9. Եթե սույն հոդվածի 8-րդ կետում նշված տեղեկությունները հնարավոր չեն գետեղել մեքենայի եւ (կամ) սարքավորման վրա, ապա դրանք կարող են նշվել միայն տվյալ մեքենային եւ (կամ) սարքավորմանը կցվող շահագործման ձեռնարկի (հրահանգի) մեջ: Ընդ որում, արտադրողի անվանումը եւ (կամ) նրա ապրանքային նշանը, մեքենայի եւ (կամ) սարքավորման անվանումն ու նշումը (տիպը, մակնիշը, մոդելը (առկայության դեպքում)) պետք է գետեղվեն փաթեթվածքի վրա:

10. Սույն հոդվածի 8-րդ կետում նշված տեղեկությունները պետք է ներառված լինեն շահագործման ձեռնարկի (հրահանգի) մեջ: Բացի դրանից՝ շահագործման ձեռնարկի (հրահանգի) մեջ պետք է ներառված լինեն արտադրողի (արտադրողի կողմից լիազորված անձի), ներմուծողի անվանումն ու գտնվելու վայրը, դրանց հետ կապ հաստատելու համար անհրաժեշտ տեղեկատվություն:

11. Շահագործման ձեռնարկը (հրահանգը) մշակվում է ռուսերենով եւ Մաքսային միության անդամ պետության պետական լեզվով (լեզուներով)` Մաքսային միության անդամ պետության (պետությունների) օրենսդրության (օրենսդրությունների) մեջ համապատասխան պահանջների առկայության դեպքում:

Շահագործման ձեռնարկը (հրահանգը) մշակվում է թղթե կրիչների վրա: Դրան կարող է կցվել էլեկտրոնային կրիչների վրա շահագործման փաստաթղթերի լրակազմ: Ոչ կենցաղային նշանակության մեքենայի եւ (կամ) սարքավորման լրակազմի մեջ մտնող շահագործման ձեռնարկը (հրահանգը), արտադրողի ընտրությամբ, կարող է մշակվել միայն էլեկտրոնային կրիչների վրա:

12. Մեքենայի եւ (կամ) սարքավորման փաթեթվածքի համար կիրառվող նյութեղենն ու նյութերը պետք է անվտանգ լինեն :

13. Մեքենաների եւ (կամ) սարքավորումների, դրանց հանգույցների ու մասերի տրանսպորտային փոխադրումն ու պահպանումը պետք է իրականացվեն՝ հաշվի առնելով նախագծային (կոնստրուկտորական) ու շահագործման փաստաթղթերով նախատեսված անվտանգության պահանջները:

14. Մեքենայի եւ (կամ) սարքավորման տեխնիկական սպասարկման, վերանորոգման ու ստուգումների անցկացման ժամանակ շահագործման ձեռնարկով (հրահանգով), տեխնիկական սպասարկման կամ վերանորոգման անցկացման ծրագրով սահմանված պահանջները պետք է պահպանվեն այդ աշխատանքների կատարման ամբողջ ժամկետի ընթացքում:

15. Մեքենայի եւ (կամ) սարքավորման կոնստրուկցիայի՝ վերանորոգման ժամանակ կատարվող փոփոխությունները պետք է համաձայնեցվեն մշակողի (նախագծողի) հետ:

16. Մեքենայի եւ (կամ) սարքավորման կապիտալ վերանորոգում անցկացնելուց հետո պետք է անցկացվի ռիսկի գնահատում, որի արժեքը չպետք

Էլինի ավելի բարձր, քան թույլատրվում է: Անհրաժեշտության դեպքում մշակվում են տեխնիկական ու կազմակերպական միջոցառումներ՝ ուղղված թույլատրելի ռիսկի արժեքի պահպանմանը:

17. Նախագծային (կոնստրուկտորական) պահանջներին չհամապատասխանող՝ վերանորոգված մեքենաների եւ (կամ) սարքավորումների համար պետք է մշակվեն միջոցառումներ՝ անվտանգության հիմնավորմամբ սահմանված ռիսկի արժեքների ապահովման ուղղությամբ՝ հաշվի առնելով կազմակերպությունում ընդունված տեխնոլոգիական գործընթացներն ու հակողության համակարգը:

18. Շահագործման ձեռնարկում (հրահանգում) պետք է սահմանվեն առաջարկություններ մեքենայի եւ (կամ) սարքավորման անվտանգ օգտահանման համար:

19. Մեքենայի եւ (կամ) սարքավորման նախագծման ժամանակ շահագործման ձեռնարկով (հրահանգով) պետք է սահմանվեն միջոցներ՝ նախատեսված ռեսուրսը կամ ծառայության նախատեսված ժամկետը լրանալուց հետո մեքենան եւ (կամ) սարքավորումը ոչ ըստ նշանակության օգտագործելու ուղղությամբ:

#### **Հոդված 6. Անվտանգության պահանջներին համապատասխանության ապահովումը**

Մեքենաների եւ (կամ) սարքավորումների համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգին ապահովվում է այդ պահանջների անմիջական կատարմամբ կամ միջակետական ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում (նախքան միջակետական ստանդարտների ընդունումը) Մաքսային միության անդամ պետությունների ազգային (պետական) ստանդարտների այն պահանջների կատարմամբ, որոնց կիրառման արդյունքում կամավոր հիմունքով ապահովվում է Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջների

պահպանումը եւ այն ստանդարտների պահանջների պահպանումը, որոնք պարունակում են հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններ ու մեթոդներ, այդ թվում՝ Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջները կիրառելու ու կատարելու եւ մեքենաների եւ (կամ) սարքավորումների համապատասխանության գնահատում (հավաստում) իրականացնելու համար անհրաժեշտ նմուշառման կանոններ (այսուհետ՝ ստանդարտներ):

Նշված ստանդարտների պահանջների կամավոր իհմունքով կատարումը վկայում է սույն Տեխնիկական կանոնակարգի անվտանգության պահանջներին մեքենաների եւ (կամ) սարքավորումների համապատասխանության մասին:

#### **Հոդված 7. Համապատասխանության գնահատումը**

1. Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվող մեքենաները եւ (կամ) սարքավորումները ենթակա են սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների համապատասխանության գնահատման:

Սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության գնահատումն անցկացվում է համապատասխանության հավաստման եւ պետական հսկողության (վերահսկողության) ձեռուվ:

Շահագործման մեջ դրված կամ արտադրողների սեփական կարիքների համար արտադրված մեքենաները եւ (կամ) սարքավորումները, ինչպես նաև մեքենաների եւ (կամ) սարքավորումների վերանորոգման (տեխնիկական սպասարկման) համար օգտագործվող կոմպլեկտավորող արտադրատեսակներն ու պահեստամասերը ենթակա չեն սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության հավաստման:

## **Հոդված 8. Համապատասխանության հավաստումը**

1. Մեքենաների եւ (կամ) սարքավորումների համապատասխանության հավաստումն իրականացվում է՝ Մաքսային միության հանձնաժողովի կողմից հաստատված միասնականացված ընթացակարգերին համապատասխան:

2. Սույն Տեխնիկական կանոնակարգին մեքենաների եւ (կամ) սարքավորումների համապատասխանության հավաստումն իրականացվում է՝

Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում ներառված՝ հավատարմագրված սերտիֆիկացման (համապատասխանության գնահատման (հավաստման)) մարմնի կողմից սերտիֆիկացման ձեռով.

սեփական ապացույցների եւ (կամ) Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների ու հավատարմագրված փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) (այսուհետ՝ հավատարմագրված փորձարկման լաբորատորիա (կենտրոն)) միասնական ռեեստրում ընդգրկված սերտիֆիկացման մարմնի կամ հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) մասնակցությամբ ձեռք բերված ապացույցների հիման վրա համապատասխանության հայտարարագրման ձեռով:

3. Սերտիֆիկացումն անցկացվում է Տեխնիկական կարգավորման օբյեկտների ցանկում ներառված այն մեքենաների եւ (կամ) սարքավորումների դեպքում, որոնք ենթակա են «Մեքենաների ու սարքավորումների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության հավաստման՝ թիվ 3 հավելվածում նշված սերտիֆիկացման ձեռով:

4. Համապատասխանության հայտարարագրումն անցկացվում է հայտատուի կողմից Տեխնիկական կարգավորման օբյեկտների ցանկում ներառված այն մեքենաների եւ (կամ) սարքավորումների դեպքում, որոնք ենթակա են «Մեքենաների ու սարքավորումների անվտանգության մասին»

Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության հավաստման, թիվ 3 հավելվածում նշված համապատասխանության հայտարարագրման ձեռվ:

5. Հայտատուի որոշմամբ, ինչպես նաև հայտատուի մոտ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության հավաստման սեփական ապացույցների բացակայության կամ ոչ բավարար քանակությամբ առկայության դեպքում սույն հոդվածի 4-րդ կետի 1-ին պարբերությունում նշված Ցանկում ներառված մեքենաների եւ (կամ) սարքավորումների համապատասխանության հայտարարագրման փոխարեն կարող է անցկացվել սերտիֆիկացում՝ ըստ սույն Տեխնիկական կանոնակարգով նախատեսված՝ մեքենաների եւ (կամ) սարքավորումների համապատասխանության հավաստագրման սխեմաներին համարժեք սխեմաների:

6. Համապատասխանության հայտարարագիրը կամ համապատասխանության սերտիֆիկատը սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին մեքենայի եւ (կամ) սարքավորման համապատասխանությունը հավաստող միակ փաստաթուղթն է:

7. Համապատասխանության հայտարարագիրը եւ համապատասխանության սերտիֆիկատն ունեն հավասար իրավաբանական ուժ ու Մաքսային միության միասնական մաքսային տարածքում գործում են այն մեքենաների եւ (կամ) սարքավորումների առնչությամբ, որոնք Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվում են համապատասխանության հայտարարագրի կամ համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամանակ, եւ կիրառելի են յուրաքանչյուր միավորի (մեքենայի եւ (կամ) սարքավորման) նկատմամբ՝ դրա ծառայության ժամկետի ընթացքում:

8. Համապատասխանության հայտարարագրի կամ

համապատասխանության սերտիֆիկատի վերաբերյալ տեղեկությունները պետք է նշվեն մեքենայի եւ (կամ) սարքավորման անձնագրում:

9. Համապատասխանության հավաստում անցկացնելիս ստուգվում է մեքենաների եւ (կամ) սարքավորումների համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին, որոնք առաջադրվել են անմիջականորեն կամ սահմանվել են սույն Տեխնիկական կանոնակարգի 6-րդ հոդվածում նշված ստանդարտներում:

10. Մեքենաների եւ (կամ) սարքավորումների համապատասխանության հավաստում անցկացնելիս հայտատուն կազմում է սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանությունը հավաստող՝ մեքենայի եւ (կամ) սարքավորման վերաբերյալ փաստաթղթերի լրակազմ, որը ներառում է՝  
անվտանգության հիմնավորումը.

տեխնիկական պայմանները (առկայության դեպքում).

շահագործման փաստաթղթերը.

6-րդ հոդվածում նշված այն ստանդարտների ցանկը, որոնց պահանջներին պետք է համապատասխանեն տվյալ մեքենաները եւ (կամ) սարքավորումները (արտադրողի կողմից դրանց կիրառման դեպքում).

պայմանագիրը (մատակարարման պայմանագիրը)՝ (խմբաքանակի, միավոր արտադրատեսակի համար) կամ ապրանքառուղեկից փաստաթղթերը՝ (խմբաքանակի, միավոր արտադրատեսակի համար).

արտադրողի կառավարման համակարգի սերտիֆիկատը (առկայության դեպքում).

անցկացված հետազոտությունների վերաբերյալ տեղեկություններ (առկայության դեպքում).

արտադրողի, վաճառողի, օտարերկրյա արտադրողի գործառույթներն իրականացնող անձի եւ (կամ) փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների)

կողմից անցկացված՝ մեքենաների եւ (կամ) սարքավորումների փորձարկումների արձանագրությունները (առկայության դեպքում)։

Նյութերի ու կոմպլեկտավորող արտադրատեսակների համապատասխանության սերտիֆիկատները կամ դրանց փորձարկումների արձանագրությունները (առկայության դեպքում)։

Տվյալ մեքենաների եւ (կամ) սարքավորումների համապատասխանության սերտիֆիկատները՝ տրված օտարերկրյա սերտիֆիկացման մարմինների կողմից (առկայության դեպքում)։

այլ փաստաթղթեր, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն հավաստում են սույն Տեխնիկական կանոնակարգի անվտանգության պահանջներին մեքենաների եւ (կամ) սարքավորումների համապատասխանության մասին (առկայության դեպքում)։

#### **Հոդված 9. Մեքենաների եւ (կամ) սարքավորումների հայտարարագրման կարգը**

Մեքենաների եւ (կամ) սարքավորումների համապատասխանության հայտարարագրումն իրականացվում է ըստ հետեւյալ սխեմաների՝

1հ սխեման սերիական թողարկման մեքենաների եւ (կամ) սարքավորումների համար ներառում է հետեւյալ գործողությունները՝

հայտատուն կազմում է 8-րդ հոդվածի 10-րդ կետում նշված փաստաթղթերի լրակազմ, իրականացնում է արտադրական հսկողություն եւ ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի արտադրական գործընթացի ժամանակ ապահովվի մեքենաների եւ (կամ) սարքավորումների համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին. անցկացնում է նմուշների փորձարկումներ փորձարկման լաբորատորիայում կամ հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում), ընդունում ու գրանցում է

համապատասխանության հայտարարագիրը:

2h սխեման մեքենաների եւ (կամ) սարքավորումների խմբաքանակի (միավոր արտադրատեսակի) համար ներառում է հետեւյալ գործողությունները՝

հայտատուն կազմում է 8-րդ հոդվածի 10-րդ կետում նշված փաստաթղթերի լրակազմ, անցկացնում է նմուշների փորձարկումներ փորձարկման լաբորատորիայում կամ հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում), ընդունում եւ գրանցում է համապատասխանության հայտարարագիրը:

3h սխեման սերիական թողարկման մեքենաների եւ (կամ) սարքավորումների համար ներառում է հետեւյալ գործողությունները՝

հայտատուն կազմում է 8-րդ հոդվածի 10-րդ կետում նշված փաստաթղթերի լրակազմ, իրականացնում է արտադրական հսկողություն եւ ծեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի արտադրական գործընթացի ժամանակ ապահովվի մեքենաների եւ (կամ) սարքավորումների համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին, անցկացնում է նմուշների փորձարկումներ հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում), ընդունում եւ գրանցում է համապատասխանության հայտարարագիրը:

4h սխեման մեքենաների եւ (կամ) սարքավորումների խմբաքանակի (միավոր արտադրատեսակի) համար ներառում է հետեւյալ գործողությունները՝

հայտատուն կազմում է 8-րդ հոդվածի 10-րդ կետում նշված փաստաթղթերի լրակազմ, անցկացնում է նմուշների փորձարկումներ հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում), ընդունում եւ գրանցում է համապատասխանության հայտարարագիրը:

5h սխեման օգտագործվում է այն մեքենաների եւ (կամ) սարքավորումների համար՝

որոնք կիրառվում են արտադրական վտանգավոր օբյեկտներում.

մինչեւ շահագործման վայրում դրանց տեղադրումն ամբողջ ծավալով փորձարկումներ անցկացնելու անհնարինության դեպքում.

Եթե հայտատուն համապատասխանության հավաստման ժամանակ չի կիրառում սույն Տեխնիկական կանոնակարգի 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված ստանդարտները, այդ թվում՝ նորարարական արտադրանքի դեպքում:

**Ներառում է հետեւյալ գործողությունները.**

հայտատուն կազմում է 8-րդ հոդվածի 10-րդ կետում նշված փաստաթղթերի լրակազմ, իրականացնում է արտադրական հսկողություն եւ ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի արտադրական գործընթացի ժամանակ ապահովվի մեքենաների եւ (կամ) սարքավորումների համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին, եւ սերտիֆիկացման մարմին է ուղարկում տիպի հետազոտում անցկացնելու հայտը.

սերտիֆիկացման մարմինն անցկացնում է տիպի հետազոտություն՝ հաշվի առնելով հայտատուից ստացված փաստաթղթերը: Եթե հայտատուն չի կիրառել սույն Տեխնիկական կանոնակարգի 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված ստանդարտները, ապա սերտիֆիկացման մարմինը գնահատում է նշված ստանդարտների պահանջները ներկայացված պահանջներով փոխարինելու հնարավորությունը: Տիպի հետազոտությունը, կախված հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերից, անցկացվում է հետեւյալ եղանակներից մեկով՝

նմուշի հետազոտությունը որպես հետագայում արտադրվող բոլոր մեքենաների եւ (կամ) սարքավորումների ներկայացուցիչ:

ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրումը, մեքենաների եւ (կամ) սարքավորումների նմուշի կամ բնորոշ (կրիտիկական) բաղկացուցիչ մասերի փորձարկումը.

տիպի անցկացված հետազոտությունների դրական արդյունքների դեպքում

սերտիֆիկացման մարմինը ձեւակերպում է Հանձնաժողովի որոշմամբ հաստատված միասնական ձեւով տիպի սերտիֆիկատը եւ այն հանձնում է հայտատուին: Տիպի սերտիֆիկատը համապատասխանության հայտարարագրի անքաժանելի մասն է, իսկ դրանում պարունակվող՝ մեքենային եւ (կամ) սարքավորմանը ներկայացվող պահանջները, որոնք համարվում են սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին դրա համապատասխանության բավարար ապացուց, օգտագործվում են սույն Տեխնիկական կանոնակարգին համապատասխանության մասով պետական հսկողության (վերահսկողության) մարմինների կողմից անցկացվող ստուգումների ժամանակ:

Հայտատուն ընդունում եւ ստորագրում է համապատասխանության հայտարարագրիը:

6h սխեման սերիական թողարկման մեքենաների եւ (կամ) սարքավորումների համար, արտադրողի մոտ կառավարման սերտիֆիկացված համակարգի առկայության դեպքում, ներառում է հետեւյալ գործողությունները՝

հայտատուն կազմում է 8-րդ հոդվածի 10-րդ կետում նշված փաստաթղթերի լրակազմ, որը պարունակում է Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների ու փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում ներառված՝ կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմնի կողմից տրված կառավարման համակարգի սերտիֆիկատը (համապատասխանության սերտիֆիկատի պատճենը), իրականացնում է արտադրական հսկողություն եւ ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի արտադրական գործընթացի ժամանակ ապահովվի մեքենաների եւ (կամ) սարքավորումների համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին, անցկացնում է նմուշների փորձարկումներ հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում), ընդունում եւ գրանցում է համապատասխանության հայտարարագրիը:

Ըստ 1h, 3h, 5h, 6h սխեմաների համապատասխանությունը

հայտարարագրելիս հայտատու կարող է լինել Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան դրա տարածքում գրանցված իրավաբանական կամ ֆիզիկական անձը, որը հանդես է գալիս որպես անհատ ձեռնարկատեր կամ արտադրող կամ օտարերկրյա արտադրողի հետ ունեցած պայմանագրի հիման վրա վերջինիս՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին մատակարարվող արտադրանքի համապատասխանության եւ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին մատակարարվող արտադրանքի անհամապատասխանության դեպքում պատասխանատվության մասով գործառույթներն իրականացնող անձ (օտարերկրյա արտադրողի գործառույթներն իրականացնող անձ):

Ըստ 2հ, 4հ սխեմաների համապատասխանությունը հայտարարագրելիս հայտատու կարող է լինել Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան դրա տարածքում գրանցված իրավաբանական կամ ֆիզիկական անձը, որը հանդես է գալիս որպես անհատ ձեռնարկատեր կամ արտադրող, վաճառող կամ օտարերկրյա արտադրողի հետ ունեցած պայմանագրի հիման վրա վերջինիս՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին մատակարարվող արտադրանքի համապատասխանության եւ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին մատակարարվող արտադրանքի անհամապատասխանության դեպքում պատասխանատվության մասով գործառույթներն իրականացնող անձ (օտարերկրյա արտադրողի գործառույթներն իրականացնող անձ):

#### **Հոդված 10. Համապատասխանության հայտարարագրի ընդունման համար հիմք հանդիսացող ապացուցողական նյութերի կազմը**

1. Որպես սեփական ապացույցների հիման վրա համապատասխանության հայտարարագրի ընդունման համար հիմք հանդիսացող ապացուցողական

նյութեր օգտագործվում են սույն Տեխնիկական կանոնակարգի 8-րդ հոդվածի 10-րդ կետում նշված փաստաթղթերը, ինչպես նաև սույն Տեխնիկական կանոնակարգի 6-րդ հոդվածում նշված ստանդարտները:

2. Որպես նշված փաստաթղթերի կիրառման պայմաններ կարող են դիտարկվել՝

1) փորձարկումների արձանագրությունների համար՝

փորձարկումների արձանագրություններում այն ցուցանիշների նշանակության առկայությունը, որոնք հավաստում են հայտագրված որոշակի արտադրանքի նկատմամբ կիրառվող սույն Տեխնիկական կանոնակարգում սահմանված բոլոր պահանջներին համապատասխանությունը.

փորձարկումների արձանագրությունների կիրառումը հայտագրված մեքենաների եւ (կամ) սարքավորումների նկատմամբ.

2) համապատասխանության սերտիֆիկատները, համապատասխանության հայտարարագրերը կամ հումքի, նյութերի, կոմպլեկտավորող արտադրատեսակների փորձարկումների արձանագրությունները, եթե դրանցով որոշվում է համապատասխանության հավաստման ենթակա վերջնական արտադրատեսակի անվտանգությունը.

3) արտադրության որակի կառավարման համակարգի սերտիֆիկատները, եթե դրանք տարածվում են հայտագրված մեքենաների եւ (կամ) սարքավորումների արտադրության վրա.

4) այլ փաստաթղթեր, որոնք ուղակիրեն կամ անուղակիրեն հավաստում են մեքենաների եւ (կամ) սարքավորումների համապատասխանությունը սահմանված պահանջներին, հայտագրված մեքենաների եւ (կամ) սարքավորումների համապատասխանության սերտիֆիկատները, որոնք տրամադրվել են կամավոր սերտիֆիկացման դեպքում (պայմանով, որ կամավոր սերտիֆիկացման ժամանակ հաստատվել են բոլոր անհրաժեշտ պահանջները):

3. Համապատասխանության հայտարարագիրը ձեւակերպվում է Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ հաստատված միասնական ձեւին համապատասխան:

Համապատասխանության հայտարարագիրը ենթակա է գրանցման՝ Մաքսային միության հանձնաժողովի կողմից հաստատված կարգին համապատասխան: Համապատասխանության հայտարարագրի գործողությունն սկսվում է դրա գրանցման օրվանից: Համապատասխանության հայտարարագրի գործողության ժամկետը կազմում է 5 տարուց ոչ ավելի:

4. Հայտատուն պարտավոր է համապատասխանության հայտարարագիրը եւ ապացուցողական նյութերը պահպանել համապատասխանության հայտարարագրի գործողության ժամկետը լրանալու պահից՝ տասը տարվա ընթացքում:

Համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի լրակազմը պետք է ներկայացվի պետական հսկողության (վերահսկողության) մարմիններ՝ նրանց պահանջով:

#### **Հոդված 11. Մեքենաների եւ (կամ) սարքավորումների սերտիֆիկացում անցկացնելու կարգը:**

1. Մեքենաների եւ (կամ) սարքավորումների սերտիֆիկացումն իրականացվում է ըստ հետեւյալ սխեմաների՝

1ս սխեման սերիական թողարկման մեքենաների եւ (կամ) սարքավորումների համար ներառում է հետեւյալ գործողություններ՝

հայտատուն կազմում է 8-րդ հոդվածի 10-րդ կետում նշված փաստաթղթերի լրակազմ եւ սերտիֆիկացման հայտը ներկայացնում է սերտիֆիկացման մարմին.

սերտիֆիկացման մարմինը փորձարկումների անցկացման համար հայտատուի մոտ անցկացնում է նմուշառում.

Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում ներառված հավատարմագրված փորձարկման լաբորատորիան (կենտրոնը) (այսուհետ՝ հավատարմագրված փորձարկման լաբորատորիա (կենտրոն)) անցկացնում է մեքենաների եւ (կամ) սարքավորումների նմուշների փորձարկումներ.

սերտիֆիկացման մարմինն անցկացնում է արտադրողի արտադրության վիճակի եւ մեքենաների եւ (կամ) սարքավորումների նմուշների փորձարկումների արդյունքների վերլուծություն եւ դրական արդյունքների դեպքում հայտատուին տալիս է համապատասխանության սերտիֆիկատ.

սերտիֆիկացման մարմինն անցկացնում է տեսչական հսկողություն սերտիֆիկացված մեքենաների եւ (կամ) սարքավորումների նկատմամբ՝ հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում) նմուշների փորձարկումներ եւ (կամ) արտադրության վիճակի վերլուծություն անցկացնելու միջոցով:

Յս սխեման մեքենաների եւ (կամ) սարքավորումների խմբաքանակի (միավոր արտադրատեսակի) համար ներառում է հետեւյալ գործողությունները՝

հայտատուն կազմում է 8-րդ հոդվածի 10-րդ կետում նշված փաստաթղթերի լրակազմ եւ սերտիֆիկացման հայտը ներկայացնում է սերտիֆիկացման մարմին.

սերտիֆիկացման մարմինը կամ հավատարմագրված փորձարկման լաբորատորիան (կենտրոնը) փորձարկումների անցկացման համար հայտատուի մոտ անցկացնում է նմուշառում.

հավատարմագրված փորձարկման լաբորատորիան (կենտրոնը) անցկացնում է մեքենաների եւ (կամ) սարքավորումների նմուշների փորձարկումներ.

սերտիֆիկացման մարմինն անցկացնում է մեքենաների եւ (կամ) սարքավորումների նմուշների փորձարկումների արդյունքների վերլուծություն եւ դրական արդյունքների դեպքում հայտատուին տալիս է համապատասխանության

սերտիֆիկատ.

9ս սխեման Մաքսային միության միասնական տարածքում ձեռնարկությունների սարքավորման համար նախատեսված՝ սահմանափակ ծավալով մեքենաների եւ (կամ) սարքավորումների խմբաքանակի համար ներառում է հետեւյալ գործողությունները.

հայտատուն կազմում է 8-րդ հոդվածի 10-րդ կետում նշված փաստաթղթերի լրակազմ եւ սերտիֆիկացման հայտը ներկայացնում է սերտիֆիկացման մարմին.

սերտիֆիկացման մարմինն անցկացնում է հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերի լրակազմի վերլուծություն եւ դրական արդյունքների դեպքում հայտատուին տալիս է համապատասխանության սերտիֆիկատ.

Ըստ 1ս, 9ս սխեմաների համապատասխանությունը հայտարարագրելիս հայտատու կարող է լինել Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան դրա տարածքում գրանցված իրավաբանական կամ ֆիզիկական անձը, որը հանդես է գալիս որպես անհատ ձեռնարկատեր կամ արտադրող կամ օտարերկրյա արտադրողի հետ ունեցած պայմանագրի հիման վրա վերջինիս՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին մատակարարվող արտադրանքի համապատասխանության եւ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին մատակարարվող արտադրանքի անհամապատասխանության դեպքում պատասխանատվության մասով գործառույթներն իրականացնող անձ (օտարերկրյա արտադրողի գործառույթներն իրականացնող անձ):

Ըստ 3ս սխեմայի համապատասխանությունը հայտարարագրելիս հայտատու կարող է լինել Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան դրա տարածքում գրանցված իրավաբանական կամ ֆիզիկական անձը, որը հանդես է գալիս որպես անհատ

ձեռնարկատեր կամ արտադրող վաճառող կամ օտարերկրյա արտադրողի հետ ունեցած պայմանագրի հիման վրա վերջինիս՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին մատակարարվող արտադրանքի համապատասխանության եւ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին մատակարարվող արտադրանքի անհամապատասխանության դեպքում պատասխանատվության մասով գործառույթներն իրականացնող անձ (օտարերկրյա արտադրողի գործառույթներն իրականացնող անձ):

2. Հայտատուն Մաքսային միության հանձնաժողովի կողմից հաստատվող սերտիֆիկացման ձետվ կազմված սերտիֆիկացման հայտով կարող է դիմել Մաքսային միության «Մեքենաների եւ սարքավորումների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության հավաստման ենթակա Մեքենաների եւ (կամ) սարքավորումների ցանկում ներառված մեքենաների եւ (կամ) սարքավորումների հավատարմագրման ոլորտում ցանկացած սերտիֆիկացման մարմին:

Սերտիֆիկացում անցկացնելու հայտը ձեւակերպվում է հայտատուի կողմից եւ պետք է պարունակի՝

հայտատուի անվանումը եւ գտնվելու վայրը.

արտադրողի անվանումը եւ գտնվելու վայրը.

տեղեկություններ մեքենայի եւ (կամ) սարքավորման (դրա բաղադրության) վերաբերյալ եւ դրա նույնականացնող հատկանիշները (անվանումը, ծածկագիրը՝ ըստ Մաքսային միության արտաքին տնտեսական գործունեության դասակարգչի, այն փաստաթուղթը, որի համաձայն պատրաստված է մեքենան եւ (կամ) սարքավորումը (միջամտական կամ ազգային ստանդարտ, տեխնիկական պայմաններ եւ այլն), թողարկման ձեւը՝ սերիական արտադրություն կամ խմբաքանակ, պայմանագրի վավերապայմանները եւ այլն).

սույն Տեխնիկական կանոնակարգի 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված՝

օգտագործվող ստանդարտը (ստանդարտները).

սերտիֆիկացման սխեման:

3. Սերտիֆիկացման մարմինն ուսումնասիրում է հայտը եւ ընդունում է որոշում սերտիֆիկացում անցկացնելու հնարավորության վերաբերյալ:

Դրական որոշման դեպքում սերտիֆիկացման մարմինը սերտիֆիկացմանն առնչվող աշխատանքների կատարման վերաբերյալ պայմանագիր է կնքում հայտատուի հետ:

Սերտիֆիկացման մարմինն աշխատանքները կատարում է սերտիֆիկացման սխեմայի համաձայն, պատրաստում է որոշումը եւ դրական արդյունքի դեպքում հայտատուին տրամադրում է համապատասխանության սերտիֆիկատը:

4. Սերտիֆիկացման բացասական արդյունքի դեպքում սերտիֆիկացման մարմինը հայտատուին ուղարկում է համապատասխանության սերտիֆիկատի տրամադրումը մերժելու վերաբերյալ հիմնավորված որոշում՝ :

5. Մեքենայի եւ (կամ) սարքավորման տիպային նմուշի (տիպային նմուշների) կամ միավոր արտադրատեսակի փորձարկումներն անցկացվում են հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) կողմից այն սերտիֆիկացման մարմնի հանձնարարականով, որին տրվում է փորձարկումների արձանագրությունը:

6. Արտադրության վիճակի վերլուծությունը սերտիֆիկացման մարմնի կողմից անցկացվում է արտադրողի մոտ: Վերլուծության արդյունքները ձեւակերպվում են ակտով:

Եթե արտադրողն ունի մեքենաների եւ (կամ) սարքավորումների արտադրության կամ մշակման եւ արտադրության որակի կառավարման սերտիֆիկացված համակարգ, ապա սերտիֆիկացման մարմինը գնահատում է տվյալ համակարգի՝ այն սերտիֆիկացվող մեքենաների եւ (կամ) սարքավորումների կայուն թողարկումն ապահովելու հնարավորությունը, որոնք

համապատասխանում են սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

7. Սերտիֆիկացման սխեմայով նախատեսված ստուգումների դրական արդյունքների դեպքում սերտիֆիկացման մարմինը ձեւակերպում է համապատասխանության սերտիֆիկատը եւ այն հանձնում է հայտատուին:

Համապատասխանության սերտիֆիկատը ձեւակերպվում է Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ հաստատված միասնական ձեւի համաձայն:

Սերտիֆիկացման մարմինը տրված համապատասխանության սերտիֆիկատի վերաբերյալ տեղեկությունները փոխանցում է Միասնական ձեւով ձեւակերպված՝ տրված համապատասխանության սերտիֆիկատների եւ գրանցված համապատասխանության հայտարարագրերի միասնական ռեեստր:

8. Թողարկվող՝ սերիական արտադրության մեքենաների եւ (կամ) սարքավորումների համար համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետը սահմանվում է 5 տարուց ոչ ավելի, իսկ թողարկված խմբաքանակի համար ժամկետ չի սահմանվում:

9. Համապատասխանության սերտիֆիկատը կարող է ունենալ հավելված, որը ներառում է որոշակի արտադրատեսակների ցանկ, որոնց վրա տարածվում է դրա գործողությունը:

**Հավելվածը ձեւակերպվում է, եթե՝**

պահանջվում է մանրամասնել հայտատուի կողմից թողարկվող եւ միեւնուն պահանջներին համապատասխան սերտիֆիկացված համանման արտադրանքի խմբի կազմը.

պահանջվում է նշել արտադրող գործարանները, որոնք ներառված են ավելի խոշոր՝ արտադրանքի արտադրության միասնական պայմաններ ունեցող միավորումներում:

**Հոդված 12. Արտադրանքի մակնշումը՝ Մաքսային միության անդամ պետությունների շուկայում շրջանառության միասնական նշանով**

1. Սույն Տեխնիկական կանոնակարգի անվտանգության պահանջներին համապատասխանող եւ սույն Տեխնիկական կանոնակարգի 8-րդ հոդվածի համաձայն համապատասխանության հավաստման ընթացակարգով անցած մեքենաները եւ (կամ) սարքավորումները պետք է ունենան Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշում:

2. Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշումն իրականացվում է մինչեւ մեքենաները եւ (կամ) սարքավորումները շուկայում շրջանառության մեջ դնելը:

3. Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը գետեղվում է մեքենաների եւ (կամ) սարքավորումների յուրաքանչյուր միավոր արտադրատեսակի վրա՝ սարքավորումների ծառայության ամբողջ ժամկետում հստակ եւ պարզ պատկեր ապահովող ցանկացած եղանակով:

Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը գետեղվում է հենց արտադրատեսակի վրա:

4. Թույլատրվում է Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի գետեղումը միայն փաթեթվածքի վրա եւ դրան կցված շահագործման փաստաթղթերում նշելը, եթե այն անհնար է գետեղել անմիջապես մեքենայի եւ (կամ) սարքավորման վրա:

5. Մեքենաները եւ (կամ) սարքավորումները մակնշվում են Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով Մաքսային միության, ԵվրԱզԷՄ-ի այն բոլոր տեխնիկական կանոնակարգերի պահանջներին դրանց համապատասխանության դեպքում, որոնք տարածվում են դրանց վրա, եւ որոնցով նախատեսվում են Մաքսային

միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի գետեղում:

### **Հոդված 13. Երաշխիքային վերապահումը**

1. Մաքսային միության անդամ պետությունները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցները Մաքսային միության միասնական մաքսային տարածքում մեքենաները եւ (կամ) սարքավորումները շրջանառության մեջ դնելը սահմանափակելու, արգելելու համար, ինչպես նաև սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող մեքենաները եւ (կամ) սարքավորումները շուկայից դուրս բերելու համար:

## Հավելված թիվ 1

«Մեքենաների եւ (կամ) սարքավորումների  
անվտանգության մասին» Մաքսային  
միության տեխնիկական կանոնակարգի

(ՄՄ ՏԿ 010/2011)

### **ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

1. Պետք է ապահովվի առանց անձնակազմը վտանգի ենթարկելու՝ արտադրողի կողմից նախատեսված պայմաններում մեքենան եւ (կամ) սարքավորումը կարգավորելու եւ դրա տեխնիկական սպասարկումն անցկացնելու հնարավորությունը:
2. Մեքենաների եւ (կամ) սարքավորումների մշակման (նախագծման) եւ արտադրության ժամանակ պատասխանատու անձինք պետք է՝

վերացնեն կամ նվազեցնեն վտանգը.

ձեռնարկեն միջոցներ՝ վտանգից պաշտպանության ուղղությամբ.

տեղեկացնեն սպառողներին պաշտպանության միջոցների մասին, նշեն, թե արդյո՞ք պահանջվում է հատուկ ուսուցում, եւ որոշեն պաշտպանության տեխնիկական միջոցների անհրաժեշտությունը:

3. Մեքենաների եւ (կամ) սարքավորումների մշակման (նախագծման) եւ արտադրության ժամանակ, ինչպես նաև մեքենայի եւ (կամ) սարքավորման շահագործման ձեռնարկը (հրահանգը) մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել հնարավոր ռիսկը մեքենաների եւ (կամ) սարքավորումների շահագործման ժամանակ:

4. Եթե չթույլատրվող շահագործման արդյունքում կարող է վտանգ

առաջանալ, ապա մեքենայի եւ (սարքավորման) կոնստրուկցիան պետք է խոչընդոտի շահագործմանը: Եթե դա հնարավոր չէ, ապա շահագործման ձեռնարկում (հրահանգում) սպառողի ուշադրությունը կենտրոնացվում է այդպիսի իրավիճակների վրա:

5. Մեքենայի եւ (կամ) սարքավորման մշակման (նախագծման) ու արտադրման ժամանակ անհրաժեշտ է օգտագործել էրգոնոմիական սկզբունքները՝ անհարմարության, անձնակազմի հոգնածության ու հոգեբանական լարվածության ազդեցությունը հնարավոր նվազագույն մակարդակի հասցնելու համար:

6. Մեքենայի եւ (կամ) սարքավորման մշակման (նախագծման) ու արտադրման ժամանակ պետք է հաշվի առնվեն անհատական պաշտպանության միջոցների օգտագործման ժամանակ օպերատորի գործողությունների վրա դրվող սահմանափակումները:

7. Մեքենան եւ (կամ) սարքավորումը պետք է համալրվեն անհրաժեշտ հարմարանքներով ու անվտանգ կարգավորումների, տեխնիկական սպասարկումն իրականացնելու եւ ըստ նշանակության օգտագործելու համար անհրաժեշտ գործիքով՝ շահագործման ձեռնարկին համապատասխան:

8. Մեքենան եւ (կամ) սարքավորումը պետք է մշակվեն (նախագծվեն) ու արտադրվեն այնպես, որ դրանց արտադրության եւ շահագործման ժամանակ օգտագործվող հումքը, նյութեղենն ու նյութերը վտանգ չստեղծեն մարդու կյանքի կամ առողջության, գույքի, շրջակա միջավայրի, կենդանիների կյանքի կամ առողջության համար:

Հեղուկների ու գագերի օգտագործման ժամանակ պետք է բացառվի դրանց օգտագործման հետ կապված վտանգը:

9. Պետք է նախատեսվի լրացուցիչ լուսաբանում՝ մեքենայի եւ (կամ) սարքավորման անվտանգ շահագործման համար:

Հաճախակի գննում, կարգավորումներ ու տեխնիկական սպասարկում

պահանջող՝ մեքենայի եւ (կամ) սարքավորման ներսի մասերի ու հատվածների համար պետք է ապահովվի անվտանգությունն ապահովող լրացավորում:

Մեքենայի եւ (կամ) սարքավորման շահագործման ժամանակ անհրաժեշտ է բացառել ստվերապատ մակերեւությունները, այն մակերեւությունները, որոնք ստեղծում են խանգարումներ, կուրացում ու ստրոբոսկոպիկ էֆեկտ:

10. Մեքենան եւ (կամ) սարքավորումը կամ դրանց յուրաքանչյուր մաս պետք է փաթեթավորվեն այնպես, որ դրանք պահվեն անվտանգ ու չվնասվեն, լինեն բավականին կայուն:

11. Եթե մեքենայի եւ (կամ) սարքավորման կամ դրանց տարբեր մասերի քաշը, չափը կամ ձեւը թույլ չեն տալիս դրանք տեղափոխել ձեռքով, ապա մեքենան եւ (կամ) սարքավորումը կամ դրանց յուրաքանչյուր մաս պետք է՝ հանդերձված լինեն մեխանիզմների վերհանման համար նախատեսված սարքվածքներով.

ունենան այնպիսի եզրաձեւ, որպեսզի հնարավոր լինի կիրառել ստանդարտ ամբարձիչ միջոցներ:

12. Եթե մեքենան եւ (կամ) սարքավորումը կամ դրանց մասերից որեւէ մեկը տեղափոխվեն ձեռքով, ապա դրանք պետք է հեշտությամբ տեղաշարժվեն կամ սարքավորված լինեն վերհանման հարմարանքներով:

Պետք է նախատեսվեն հատուկ վայրեր շահագործման ժամանակ անհրաժեշտ մանրակների ու հանգույցների գործիքների անվտանգ տեղադրման համար:

13. Մեքենայի եւ (կամ) սարքավորման կառավարման համակարգերը պետք է ապահովեն դրանց անվտանգ շահագործումն աշխատանքի բոլոր նախատեսված ռեժիմներում եւ շահագործման պայմաններով նախատեսված ցանկացած արտաքին գործոնի ներգործության դեպքում:

Կառավարման համակարգերը պետք է բացառեն հնարավոր

տրամաբանական սխալների եւ անձնակազմի կողմից կառավարման գործողությունները խախտելու հետեւանքով վտանգավոր իրավիճակների առաջացումը:

Պայմանավորված մեքենաների եւ (կամ) սարքավորումների աշխատանքի ռեժիմի կառավարման ու հսկողության բարդությամբ՝ կառավարման համակարգերը պետք է ներառեն աշխատանքի ռեժիմների ավտոմատ կառավարման միջոցներ կամ ավտոմատ շարժականգի միջոցներ, եթե աշխատանքի ռեժիմի խախտումը կարող է վտանգավոր իրավիճակի առաջացման պատճառ դառնալ:

14. Մեքենայի եւ (կամ) սարքավորման կառավարման համակարգերը պետք է ներառեն նախազգուշական ազդանշաններ եւ վտանգավոր իրավիճակների առաջացմանը հանգեցնող՝ մեքենաների եւ (կամ) սարքավորումների գործառման խախտումների մասին նախազգուշացնող այլ միջոցներ:

Մեքենաների եւ (կամ) սարքավորումների գործառման խախտումների մասին նախազգուշացնող միջոցները պետք է ապահովեն անձնակազմի կողմից տեղեկատվության անսխալ հավաստի ու արագ ընկալումը:

15. Մեքենայի եւ (կամ) սարքավորման կառավարման օրգանները պետք է լինեն՝

հեշտ հասանելի ու տարբերակվող, ապահոված գրություններով, խորհրդանշներով ու տարբերակված այլ եղանակներով.

Կառուցված ու տեղադրված այնպես, որ բացառվի դրանց ինքնաբերաբար տեղափոխումը եւ ապահովվի դրանց հուսալի, վստահ ու միանշանակ կառավարումը.

Տեղադրված՝ հաշվի առնելով տեղափոխման համար անհրաժեշտ ջանքերը, օգտագործման հաջորդականությունն ու հաճախականությունը, ինչպես նաև գործառույթների կարեւորությունը.

պատրաստված լինեն այնպես, որ դրանց ձեւն ու չափերը համապատասխանեն բռնելու (մատներով, դաստակով) կամ սեղմելու (ձեռքի մատով, ափով, ոտնաթաթով) եղանակին.

Դասավորված լինեն վտանգավոր գոտուց դուրս, բացի այն կառավարման մարմիններից, որոնց ֆունկցիոնալ նշանակության համար անհրաժեշտ է, որ անձնակազմը գտնվի վտանգավոր գոտում. այդ դեպքում ձեռնարկում են լրացուցիչ միջոցներ՝ անվտանգության ապահովման ուղղությամբ:

16. Այն դեպքում, եթե նախատեսվում է կառավարում մեկ կառավարման օրգանի, սակայն տարբեր գործողությունների միջոցով, ապա կատարվող գործողությունը պետք է արտացոլվի հսկողության միջոցներով եւ ենթարկվի ստուգման:

17. Մեքենայի եւ (կամ) սարքավորման գործարկումը, ինչպես նաև շարժականգից հետո կրկնակի գործարկումը (անկախ շարժականգի պատճառներից) պետք է իրականացվի միայն գործարկման կառավարման օրգանի միջոցով: Այդ պահանջը չի վերաբերում ավտոմատ ռեժիմով աշխատող արտադրական սարքավորման կրկնակի գործարկմանը, եթե շարժականգից հետո կրկնակի գործարկումը նախատեսված է այդ ռեժիմով:

Այն դեպքում, եթե մեքենաների եւ (կամ) սարքավորումների համակարգն ունի համակարգի կամ դրա առանձին մասերի գործարկումն իրականացնող մի քանի կառավարման օրգան, իսկ դրանց օգտագործման հաջորդականության խախտումը կարող է հանգեցնել վտանգավոր իրավիճակների առաջացմանը, կառավարմամբ պետք է նախատեսվեն հաջորդականության խախտումը բացառող սարքվածքներ:

18. Մեքենաների եւ (կամ) սարքավորումների յուրաքանչյուր համակարգ պետք է սարքավորված լինի կառավարման օրգանով, որի օգնությամբ հնարավոր լինի մեքենան անվտանգ լրիվ կանգնեցնել: Մեքենաների եւ (կամ) սարքավորումների շարժականգի կառավարման միջոցները պետք է գործարկման

միջոցների նկատմամբ ունենան գերակայություն:

Մեքենայի եւ (կամ) սարքավորման շարժականգից հետո մեքենայի եւ (կամ) սարքավորման շարժաբերից ստացվող էներգիայի աղբյուրը պետք է անջատված լինի՝ բացառությամբ այնպիսի դեպքերի, երբ էներգիայի աղբյուրների անջատումը կարող է հանգեցնել վտանգավոր իրավիճակի ստեղծմանը: Մեքենայի եւ (կամ) սարքավորման կառավարման համակարգերը (բացառությամբ ձեռքի կառավարմամբ շարժական մեքենաների) պետք է սարքավորված լինեն արտակարգ արգելակման եւ վթարային շարժականգի (անջատման) միջոցներով, եթե այդ համակարգերի կիրառումը կարող է նվազեցնել կամ կանխել վտանգը:

19. Վթարային շարժականգի կառավարման օրգանը պետք է՝

լինի հստակ տարբերվող եւ հեշտ հասանելի:

արագ կանգնեցնի մեքենան եւ (կամ) սարքավորումը՝ վտանգ չառաջացնելով.

գործողության մեջ դնելուց հետո լինի շարժականգին համապատասխանող դիրքում, մինչեւ որ այն օգտագործողի կողմից վերադարձվի սկզբնական դիրքի.

Վերադարձվի սկզբնական դիրքի՝ չհանգեցնելով մեքենայի եւ (կամ) սարքավորման գործարկմանը.

լինի կարմիր գույնի, մյուս կառավարման օրգաններից տարբերվի ձեւով եւ չափերով:

20. Մեքենաների եւ (կամ) սարքավորումների համակարգի կառավարումը պետք է բացառի վտանգի առաջացումը դրանց համատեղ գործառման արդյունքում, ինչպես նաև դրանց որեւէ մասի խափանման դեպքում:

Մեքենաների եւ (կամ) սարքավորումների համակարգի կառավարումը պետք է անձնակազմին թույլ տա անհրաժեշտության դեպքում բլոկավորել համակարգի գործարկումը, ինչպես նաև իրականացնել դրա շարժականգը:

21. Մեքենաների եւ (կամ) սարքավորումների համակարգի կառավարման վահանակը պետք է անձնակազմին թույլ տա վերահսկել անձնակազմի կամ այլ անձանց բացակայությունը վտանգավոր գոտիներում կամ կառավարումը պետք է բացառի մեքենայի եւ (կամ) սարքավորման համակարգի գործառումը անձնակազմի կամ այլ անձանց՝ վտանգավոր գոտում գտնվելու դեպքում։ Յուրաքանչյուր գործարկմանը պետք է նախորդի նախազգուշացնող ազդանշան, որի գործողության տեսողությունը վտանգավոր գոտում գտնվող անձանց թույլ կտա լրել այն կամ կանխել համակարգի գործարկումը։

Մեքենաների եւ (կամ) սարքավորումների համակարգի կառավարման վահանակը պետք է սարքավորված լինի համակարգի ցանկացած մասի շահագործման խախտումների վերաբերյալ տեղեկատվության արտացոլման միջոցներով, ինչպես նաև համակարգի եւ (կամ) դրա առանձին մասերի վթարային շարժականգի (անջատման) միջոցներով։

22. Մեքենայի եւ (կամ) սարքավորման կառավարման շահագործման ռեժիմների փոխարկիչների առկայության դեպքում դրա յուրաքանչյուր դիրք պետք է համապատասխանի շահագործման միայն մեկ ռեժիմի եւ հուսալիորեն ամրակապվի։

23. Եթե մեքենայի եւ (կամ) սարքավորման շահագործման որոշակի ռեժիմների դեպքում անհրաժեշտ է անձնակազմի ընդգծված պաշտպանություն, ապա փոխարկիչով այդ ռեժիմները միացնելու դեպքում պետք է ապահովվի՝

ավտոմատ կառավարումը բլոկավորելու հնարավորությունը.

Կոնստրուկցիայի տարրերի շարժումը միայն շարժման կառավարման օրգանին մշտապես ուժ կիրառելիս։

Մեքենայի եւ (կամ) սարքավորման աշխատանքի դադարեցումը, եթե դրանց աշխատանքը կարող է վտանգ ստեղծել անձնակազմի համար։

Մեքենայի եւ (կամ) սարքավորման այն մասերը, որոնք չեն օգտագործվում ընտրված ռեժիմով աշխատելիս։

մեքենայի եւ (կամ) սարքավորման այն մասերի շարժման արագության նվազեցումը, որոնք չեն օգտագործվում ընտրված ռեժիմով աշխատելիս:

24. Կառավարման ընտրված ռեժիմը պետք է որոշակի գերակայություն ունենա կառավարման բոլոր մյուս ռեժիմների նկատմամբ՝ բացառությամբ վթարային շարժականգի:

25. Էներգիայի մատուցման լրիվ կամ մասնակի դադարեցումը կամ դրա հետագա վերականգնումը, ինչպես նաև էներգիայի մատուցման կառավարման շղթայի վնասումը չպետք է հանգեցնի վտանգավոր իրավիճակների առաջացմանը՝ ներառյալ

Էներգիայի մատուցման վերականգնման դեպքում մեքենայի եւ (կամ) սարքավորման ինքնաբերական գործարկումը.

շարժականգի արդեն տրված հրամանը չկատարելը.

մեքենայի եւ (կամ) սարքավորման շարժական մասերի ու դրանց վրա ամրացված առարկաների, նախապատրաստվածքների, գործիքների անկումն ու դուրսնետումը.

պաշտպանական սարքվածքների արդյունավետության նվազեցումը:

26. Մեքենայի եւ (կամ) սարքավորման կառավարման սխեմայում ցանկացած խախտում (անսարքություն կամ վնասում) չպետք է հանգեցնի վտանգավոր իրավիճակների առաջացմանը՝ ներառյալ՝

Էներգիայի մատուցման վերականգնման դեպքում մեքենայի եւ (կամ) սարքավորման ինքնաբերական գործարկումը.

շարժականգի արդեն տրված հրամանը չկատարելը.

մեքենայի եւ (կամ) սարքավորման շարժական մասերի ու դրանց վրա ամրացված առարկաների, նախապատրաստվածքների, գործիքների անկումն ու դուրսնետումը.

պաշտպանական սարքվածքների արդյունավետության նվազեցումը:

27. Մեքենան եւ (կամ) սարքավորումը նախատեսված աշխատանքային պայմաններում պետք է կայուն լինեն՝ ապահովելով օգտագործումը՝ առանց դրանց շրջվելու, անկման կամ անսպասելի տեղափոխման վտանգի:

Շահագործման ձեռնարկի (հրահանգի) մեջ պետք է նշվի համապատասխան ամրակումների կիրառումները:

28. Մեքենաների եւ (կամ) սարքավորումների մանրակները եւ դրանց միացումները պետք է դիմանան ճիգերին ու լարումներին, որոնց ենթարկվում են շահագործման ժամանակ:

Կիրառվող նյութերի երկարակեցությունը պետք է համապատասխանի նախատեսվող շահագործմանը, հաշվի առնվի հոգնածության, հնացման, կոռոզիայի ու մաշվածության հետ կապված վտանգի առաջացումը:

29. Մեքենաների եւ (կամ) սարքավորումների շահագործման ձեռնարկի (հրահանգի) մեջ պետք է նշվեն անվտանգության ապահովման համար անհրաժեշտ հսկողության ու տեխնիկական սպասարկման տեսակն ու պարբերականությունը: Անհրաժեշտության դեպքում պետք է նշվեն մաշված մասերը եւ դրանց փոխարինման չափանիշները:

30. Եթե, չնայած ձեռնարկված միջոցներին, մեքենայի եւ (կամ) սարքավորման ջարդվելու վտանգը չի վերանում, ապա պաշտպանակները պետք է տեղադրվեն այնպես, որ մեքենայի եւ (կամ) սարքավորման մասերի կամ հանգույցների ջարդվելու դեպքում դրանց հատվածները ցրիվ չգան:

31. Խողովակաշարերը պետք է դիմանան նախատեսված բեռնվածքին, լինեն հուսալիորեն ամրակապված եւ արտաքին մեխանիկական ներգործություններից պաշտպանված:

Պետք է ձեռնարկվեն խողովակաշարերի ջարդվելու, անսպասելիորեն տեղաշարժվելու վտանգավոր հետեւանքներից կամ դրանց ջարդվելու դեպքում

բարձր ճնշման շիթերից պաշտպանության միջոցներ:

32. Անհրաժեշտ է ձեռնարկել նախազգուշացման միջոցներ՝ մեքենայից եւ (կամ) սարքավորումից դուրս նետվող մանրակներից, դրանց հատվածներից, թափոններից առաջացող վտանգը կանխելու համար:

33. Մեքենաների եւ (կամ) սարքավորումների հասանելի մասերը չպետք է ունենան կտրող եզրեր, սուր անկյուններ ու անհարթ մակերեսներ, որոնք կարող են վնասվածք հասցնել եւ որոնք տեխնոլոգիապես կապված չեն մեքենայի եւ (կամ) սարքավորման գործառույթների կատարման հետ:

34. Եթե մեքենան եւ (կամ) սարքավորումը նախատեսված են մշակվող առարկան ձեռքով տեղափոխելու հետ կապված տարբեր գործողությունների կատարման համար, ապա պետք է ապահովվի յուրաքանչյուր ֆունկցիոնալ տարրի օգտագործման հնարավորությունը՝ անձնակազմի համար վտանգ ներկայացնող այլ տարրերից առանձին:

35. Եթե մեքենան եւ (կամ) սարքավորումը նախատեսված են տարբեր ռեժիմներով, արագություններով աշխատելու համար, ապա անհրաժեշտ է ապահովել այդ ռեժիմների անվտանգ եւ հուսալի ընտրությունն ու սարքաբերումը:

36. Մեքենաների եւ (կամ) սարքավորումների շարժվող մասերը պետք է տեղադրվեն այնպես, որ վնասվածք ստանալու հնարավորություն չստեղծվի, կամ այդպիսի վտանգի դեպքում պետք է կիրառվեն նախազգուշացնող նշաններ եւ (կամ) գրություններ, ապահովիչ կամ պաշտպանիչ սարքվածքներ՝ մեքենայի եւ (կամ) սարքավորման հետ այնպիսի հպումներից խուսափելու նպատակով, որոնք կարող են հանգեցնել դժվար պատահարների:

37. Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ՝ շարժվող մասերի բլոկավորումը կանխելու համար: Այն դեպքում, եթե, չնայած ձեռնարկված միջոցներին, կա բլոկավորման հնարավորություն, պետք է անվտանգ ապարակավորման համար նախատեսվեն հատուկ գործիքներ: Ապարակավորման կարգն ու մեթոդները պետք է նշվեն շահագործման ձեռնարկի (հրահանգի) մեջ, իսկ մեքենայի եւ (կամ)

սարքավորման վրա պետք է գետեղվի համապատասխան նշում:

38. Պաշտպանիչ եւ ապահովիչ սարքվածքները, որոնք օգտագործվում են մեքենայի եւ (կամ) սարքավորման շարժվող մանրակներից առաջացող վտանգից պաշտպանելու համար, պետք է ընտրվեն՝ ելնելով ռիսկի վերլուծությունից:

39. Պաշտպանիչ եւ ապահովիչ սարքվածքները պետք է՝

ունենան ամուր, կայուն կոնստրուկցիա.

լինեն անվտանգ.

տեղադրված լինեն վտանգավոր գոտուց համապատասխան հեռավորության վրա.

չխանգարեն վտանգավոր գոտիներում արտադրական գործընթացի նկատմամբ հսկողության իրականացմանը.

թույլատրեն կատարել գործիքի կարգաբերման եւ (կամ) փոխարինման, ինչպես նաև մեքենաների եւ (կամ) սարքավորումների տեխնիկական սպասարկման հետ կապված աշխատանքներ:

40. Անշարժ պաշտպանակները պետք է հուսալիորեն ամրացվեն այնպես, որ պաշտպանվող գոտուն մոտենալը հնարավոր լինի միայն գործիքների օգտագործմամբ:

41. Շարժական պաշտպանակները պետք է՝

հնարավորինս ամրակցված մնան մեքենայի եւ (կամ) սարքավորման վրա, երբ դրանք բաց են.

ունենան բլոկավորող սարքվածքներ, որոնք կխոչընդոտեն մեքենայի կամ սարքավորման գործառմանը այն ժամանակ, երբ պաշտպանակները բաց են:

42. Շարժական պաշտպանակներն ու պաշտպանիչ սարքվածքները պետք է մշակվեն (նախագծվեն) ու ընդգրկվեն մեքենայի եւ (կամ) սարքավորման կառավարման համակարգում այնպես, որ՝

հնարավոր չլինի գործողության մեջ դնել շարժվող մասերն այնքան ժամանակ, մինչդեռ դրանք գտնվում են անձնակազմի համար հասանելի գոտում.

հնարավոր ներգործության ենթարկվող անձինք միացնելու պահին չգտնվեն հասանելիության սահմաններում.

դրանք հնարավոր լինի տեղակայել միայն գործիքների օգտագործմամբ.

այդ սարքվածների բաղադրիչներից մեկի բացակայությունը կամ խափանումը կանխի շարժվող մասերի միացումը կամ շարժականգը.

դուրս նետվող մասերից պաշտպանությունն ապահովվի համապատասխան փակոցի ստեղծման միջոցով:

43. Դեպի աշխատանքի համար անհրաժեշտ շարժվող մասեր մուտքը սահմանափակող պաշտպանիչ սարքվածքները պետք է՝

տեղակայվեն ձեռքով կամ ավտոմատ կերպով (կախված այն աշխատանքի տեսակից, որին դրանք մասնակցում են).

տեղակայվեն առանց գործիքների օգտագործման.

սահմանափակեն վտանգը դուրս նետվող մասերից:

44. Պաշտպանիչ սարքվածքներն անհրաժեշտ է մեքենաների եւ (կամ) սարքավորումների կառավարման համակարգերի հետ կապել այնպես, որ՝

հնարավոր չլինի գործողության մեջ դնել շարժվող մասերն այնքան ժամանակ, մինչդեռ դրանք գտնվում են օպերատորի համար հասանելի գոտում.

դրանք գործողության մեջ դնելու ժամանակ անձնակազմը չգտնվի մեքենայի եւ (կամ) սարքավորման շարժվող մասերի հասանելիության սահմաններում.

պաշտպանության միջոցների բաղադրիչներից մեկի բացակայությունը կամ անաշխատունակությունը բացառի շարժվող մասերի միացման կամ շարժականգի հնարավորությունը.

45. Պաշտպանիչ սարքվածքները պետք է տեղակայվեն (հանվեն) միայն

գործիքների օգտագործմամբ:

46. Եթե մեքենաներում եւ (կամ) սարքավորումներում օգտագործվում է էլեկտրական էներգիա, ապա դրանք պետք է մշակվեն (նախագծվեն), արտադրվեն ու տեղակայվեն այնպես, որ բացառվի էլեկտրահարման վտանգը:

47. Եթե մեքենաներում եւ (կամ) սարքավորումներում օգտագործվում է ոչ էլեկտրական էներգիա (հիդրավլիկական, օդանշական, ջերմային էներգիա), ապա դրանք պետք է մշակվեն (նախագծվեն) եւ արտադրվեն այնպես, որ հնարավոր լինի խուսափել էներգիայի այդ տեսակների հետ կապված ցանկացած վտանգից:

48. Մեքենայի եւ (կամ) սարքավորման հավաքակցման ժամանակ պետք է բացառվեն այնպիսի սխալներ, որոնք կարող են վտանգի աղբյուր լինել: Դրա անհնարինության դեպքում նախազգուշացումները պետք է զետեղվեն անմիջապես մեքենայի եւ (կամ) սարքավորման վրա: Կրկնակի հավաքակցման ժամանակ հնարավոր սխալների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է ներկայացվի շահագործման ձեռնարկի (հրահանգի) մեջ:

49. Անհրաժեշտ է բացառել հեղուկներն ու գազերը խառնելու եւ (կամ) հավաքակցման ժամանակ էլեկտրական հաղորդիչները սխալ միացնելու հետեւանքով առաջացած վտանգը: Դրա անհնարինության դեպքում դրա վերաբերյալ տեղեկատվությունը պետք է նշվի փողակների, մալուխների եւ (կամ) միակցիչ բլոկների վրա:

50. Պետք է ձեռնարկվեն միջոցներ՝ ուղղված մեքենայի եւ (կամ) սարքավորման մանրակների կամ բարձր կամ ցածր ջերմաստիճանով նյութերին հպվելու կամ դրանց մոտ լինելու հետեւանքով առաջացած վտանգը վերացնելուն:

Անհրաժեշտ է գնահատել մեքենաներից եւ (կամ) սարքավորումներից բարձր կամ ցածր ջերմաստիճան ունեցող աշխատանքային ու բանեցրած նյութերի դուրսբերման վտանգը, իսկ վտանգի առկայության դեպքում պետք է ձեռնարկվեն միջոցներ՝ դրա նվազեցման ուղղությամբ:

Անհրաժեշտ է ապահովել պաշտպանությունը մեքենայի եւ (կամ) սարքավորման մասերին հպվելու կամ դրանց մոտ լինելու կամ աշխատանքի ժամանակ բարձր կամ ցածր ջերմաստիճանով նյութեր օգտագործելու հետեւանքով առաջացող վնասվածքներից:

Ձեռքի գործիքների մետաղական մակերեւույթները, մեքենաների եւ (կամ) սարքավորումների մետաղական բռնակներն ու սողնակները պետք է պատվեն ջերմամեկուսիչ նյութով: Սարքավորման մետաղական մակերեւույթների ջերմաստիճանը մաշկի բաց հատվածի հետ հնարավոր (ոչ դիտավորյալ) համան դեպքում պետք է լինի թույլատրելի արժեքների սահմաններում:

51. Մեքենան եւ (կամ) սարքավորումը պետք է մշակվեն (նախագծվեն) այնպես, որ անմիջապես մեքենայից եւ (կամ) սարքավորումից, մեքենայի եւ (կամ) սարքավորման կողմից արտադրվող կամ օգտագործվող գազերից, հեղուկներից, փոշուց, գոլորշուց կամ այլ նյութերից առաջացող հրդեհի կամ գերտաքացման վտանգ չլինի:

Մեքենան եւ (կամ) սարքավորումը պետք է մշակվեն (նախագծվեն) այնպես, որ անմիջապես մեքենայից եւ (կամ) սարքավորումից, մեքենայի եւ (կամ) սարքավորման կողմից արտադրվող կամ օգտագործվող գազերից, հեղուկներից, փոշուց, գոլորշուց կամ այլ նյութերով պայմանավորված պայթյունի անթույլատրելի ռիսկ չլինի, որի համար անհրաժեշտ է՝

խուսափել պայթյունավտանգ նյութերի վտանգավոր կոնցենտրացիայից.

Իրականացնել չընդհատվող ավտոմատ հսկողություն պայթյունավտանգ նյութերի կոնցենտրացիայի նկատմամբ.

Կանխել պոտենցիալ պայթյունավտանգ միջավայրի բռնկումը.

Նվազագույնի հասցնել պայթյունի հետեւանքները:

52. Մեքենաների եւ (կամ) սարքավորումների մշակման (նախագծման) ժամանակ անհրաժեշտ է ապահովել աղմուկի, ենթաձայնի, օդային ու հպումային

ուլտրաձայնի՝ մեքենաների եւ (կամ) սարքավորումների շահագործման ժամանակ թույլատրելին չգերազանցող պարամետրերը:

53. Շահագործման ձեռնարկի (հրահանգի) մեջ պետք է սահմանվեն մեքենայի եւ (կամ) սարքավորման աղմուկի պարամետրեր ու անորոշության պարամետրեր:

54. Մեքենաների եւ (կամ) սարքավորումների մշակման (նախագծման) ժամանակ անհրաժեշտ է ապահովել անձնակազմի վրա ազդող թրթուման թույլատրելի պարամետրերը:

Մեքենայի եւ (կամ) սարքավորման նախագծում պետք է ապահովվի անձնակազմի վրա ազդող թրթուման ներգործությամբ առաջացող թույլատրելի ռիսկը:

55. Ձեռքի մեքենաների եւ ձեռքի կառավարմամբ մեքենաների, ինչպես նաև անձնակազմի համար նախատեսված աշխատանքային տեղով սարքավորված մեքենաների համար շահագործման ձեռնարկի (հրահանգի) մեջ պետք է նշվեն անձնակազմի վրա ազդող ճշգրտված թրթուման արագացման միջին քառակուսային լրիվ արժեքը եւ այդ արժեքի գնահատման անորոշության պարամետրերը:

56. Մեքենան եւ (կամ) սարքավորումը պետք է մշակվեն (նախագծվեն) ու արտադրվեն այնպես, որ իոնացնող ճառագայթումը վտանգ չառաջացնի:

57. Լազերային սարքավորումներ օգտագործելիս պետք է՝

կանխվի պատահական ճառագայթումը.

ապահովվի պաշտպանություն ուղիղ, անդրադարձող, ցրված եւ երկրորդային ճառագայթումից.

ապահովվի լազերային սարքավորման դիտման ու կարգաբերման համար նախատեսված օպտիկական սարքավորումներից առաջացող վտանգի բացակայությունը:

58. Մեքենաների եւ (կամ) սարքավորումների մշակման (նախագծման) ժամանակ անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ՝ ոչ իոնացնող ճառագայթումների անբարենպաստ ազդեցությունից, ստատիկ էլեկտրական, հաստատուն մագնիսական դաշտերից, արդյունաբերական հաճախականության էլեկտրամագնիսական դաշտերից, ռադիոհաճախականության ու օպտիկական ընդգրկույթների էլեկտրամագնիսական դաշտերից անձնակազմը պաշտպանելու ուղղությամբ:

59. Այն գագերը, հեղուկները, փոշին, գոլորշին ու մյուս թափոնները, որոնք մեքենաները եւ (կամ) սարքավորումներն արտազատում են շահագործման ժամանակ, չպետք է վտանգի աղբյուր լինեն մարդու ու շրջակա միջավայրի կյանքի եւ առողջության համար:

Այդպիսի վտանգի առկայության դեպքում մեքենան եւ (կամ) սարքավորումը պետք է հանդերձվեն այդ նյութերը հավաքելու եւ (կամ) հեռացնելու համար նախատեսված սարքվածքներով, որոնք պետք է տեղադրվեն արտանետման աղբյուրին հնարավորինս մոտիկ, ինչպես նաև թափոնների նկատմամբ չընդհատվող ավտոմատ հսկողության իրականացման համար նախատեսված սարքվածքներով:

60. Մեքենան եւ (կամ) սարքավորումը պետք է հանդերձվեն մեքենայի եւ (կամ) սարքավորման ներսում անձնակազմի փակվելը կանխող միջոցներով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ օգնության կանչելու ազդանշանման սարքվածքներով:

61. Մեքենայի եւ (կամ) սարքավորման այն մասերը, որտեղ կարող է գտնվել անձնակազմը, պետք է մշակվեն (նախագծվեն) այնպես, որ կանխվի դրանց վրա կամ դրանցից անձնակազմի սահելը, սայթաքելը կամ ընկնելը:

62. Մեքենայի եւ (կամ) սարքավորման տեխնիկական սպասարկման վայրերը պետք է տեղադրվեն վտանգավոր գոտիներից դուրս:

Հնարավորության դեպքում տեխնիկական սպասարկումը պետք է

անցկացվի մեքենայի եւ (կամ) սարքավորման շարժականգի ժամանակ: Եթե տեխնիկական պատճառներով այդպիսի պայմանները չեն կարող պահպանվել, ապա պետք է ապահովվի տեխնիկական սպասարկման անվտանգ լինելը:

63. Անհրաժեշտ է ապահովել, որ անսարքությունների հայտնաբերման նպատակով մեքենաների եւ (կամ) սարքավորումների վրա տեղադրվեն ախտորոշման սարքավորումներ:

Անհրաժեշտ է ապահովել, որ մեքենաների եւ (կամ) սարքավորումների՝ հաճախակի փոխարինման կարիք ունեցող հանգույցները հնարավոր լինի արագ ու անվտանգ հանել ու փոխարինել (հատկապես շահագործման ժամանակ դրանց փոխարինման անհրաժեշտության կամ դրանց մաշվելու կամ հնանալու դեպքում, ինչը կարող է վտանգի հանգեցնել): Շահագործման ձեռնարկին (հրահանգին) համապատասխան գործիքի կամ չափիչ սարքերի օգնությամբ այդպիսի աշխատանքների կատարման համար անհրաժեշտ է ապահովել այդպիսի տարրերի անվտանգ հասանելիությունը:

64. Աշխատանքային տեղի, տեխնիկական սպասարկման բոլոր գոտիների անվտանգ մուտքի համար անհրաժեշտ է ապահովել համապատասխան միջոցների առկայությունը (աստիճաններ, սրահներ, անցամասեր եւ այլն):

65. Մեքենաները եւ (կամ) սարքավորումները պետք է սարքավորվեն էներգիայի բոլոր աղբյուրներից անջատման միջոցներով, որոնք նույնականացվում են ըստ գույնի ու չափի: Եթե դրանց գործարկումը կարող է վտանգ առաջացնել վտանգի ներգործության գոտում գտնվող անձանց համար, ապա անհրաժեշտ է ապահովել դրանք բլոկավորելու հնարավորությունը:

Եթե անձնակազմն իրեն հասանելի ցանկացած հատվածում գտնվելիս չի կարող ստուգել, թե արդյո՞ք էներգիայի մատուցումն անջատվել է, թե ոչ, ապա անհրաժեշտ է ապահովել էներգիայի մատուցումն անջատելու միջոցները բլոկավորելու հնարավորությունը:

Անհրաժեշտ է ապահովել էներգիայի մատուցումն անջատելուց հետո

մեքենայի եւ (կամ) սարքավորման շղթաներում մնացող ցանկացած էներգիան անվտանգ անջատելու (նվազեցնելու) հնարավորությունը: Անհրաժեշտության դեպքում որոշ շղթաներ կարող են միացված մնալ էներգիայի աղբյուրներին՝ տեղեկատվության պաշտպանության, վթարային լուսավորման համար: Այն դեպքում պետք է ձեռնարկվեն միջոցներ՝ անձնակազմի անվտանգությունն ապահովելու ուղղությամբ:

66. Մեքենաները եւ (կամ) սարքավորումները պետք է մշակվեն (նախագծվեն) այնպես, որ անձնակազմի կողմից միջամտության անհրաժեշտությունը սահմանափակ լինի, եթե դա նախատեսված չէ շահագործման ձեռնարկով (հրահանգով):

Եթե անհնար է խուսափել անձնակազմի կողմից միջամտությունից, ապա դա պետք է անվտանգ լինի:

67. Անհրաժեշտ է նախատեսել մեքենաների եւ (կամ) սարքավորումների՝ վտանգավոր տարրեր պարունակող ներքին մասերը մաքրելու հնարավորությունը՝ առանց մեքենայի եւ (կամ) սարքավորման մեջ մտնելու, ինչպես նաև արտաքին կողմից ապարիկավորելու: Անհրաժեշտ է ապահովել մաքրելու գործընթացի անվտանգությունը:

68. Մեքենայի եւ (կամ) սարքավորման կառավարման համար անհրաժեշտ տեղեկատվությունը պետք է միանշանակորեն հասկանալի լինի անձնակազմի համար: Տեղեկատվությունը չպետք է լինի չափից դուրս շատ, որպեսզի չծանրաբեռնի անձնակազմին շահագործման ժամանակ:

69. Եթե աշխատանքի ժամանակ խափանումների պատճառով անձնակազմը կարող է վտանգի ենթարկվել, ապա մեքենան եւ (կամ) սարքավորումը պետք է հանդերձված լինեն նախազգուշացնող ձայնային կամ գունային ազդանշան տվող սարքվածքներով:

Մեքենաների եւ (կամ) սարքավորումների նախազգուշացնող ազդանշանման սարքվածքներից տրվող ազդանշանները պետք է լինեն միանշանակորեն

ընկալելի: Անձնակազմը պետք է նախազգուշացնող ազդանշանման սարքվածքների աշխատանքն ստուգելու հնարավորություն ունենա:

70. Եթե, չնայած ձեռնարկված միջոցներին, կա վտանգ, ապա մեքենան եւ (կամ) սարքավորումը պետք է ապահովված լինեն նախազգուշացնող գրություններով (նշաններով), որոնք պետք է լինեն հասկանալի ու կազմված լինեն ռուսերեն լեզվով, իսկ Մաքսային միության անդամ պետության (պետությունների) օրենսդրության (օրենսդրությունների) մեջ համապատասխան պահանջների առկայության դեպքում՝ նաեւ Մաքսային միության անդամ պետության պետական լեզվով (լեզուներով):

## Հավելված թիվ 2

«Մեքենաների եւ (կամ) սարքավորումների  
անվտանգության մասին» Մաքսային  
միության տեխնիկական կանոնակարգի

(ՄՄ ՏԿ 010/2011)

### **ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՁՆԵՐ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՈՐՈՇԱԿԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

#### **Գյուղատնտեսական եւ այլ ինքնաշարժ ու շարժունակ մեքենաներ**

1. Այն մեքենաները, որոնցից վտանգի առաջացումը կապված է դրանց շարժման հետ, պետք է համապատասխանեն նաեւ սույն հավելվածում նշված անվտանգության պահանջներին:
2. Օպերատորի աշխատատեղից տեսանելիությունը պետք է լինի բավարար մեքենան ու դրա աշխատանքային գործիքներն ըստ նշանակության կիրառելու ժամանակ օպերատորի եւ վտանգավոր գոտում գտնվող անձնակազմի անվտանգությունն ապահովելու համար: Անհրաժեշտության դեպքում պետք է ապահովվի ոչ բավարար տեսանելիությամբ պայմանավորված վտանգների վերացման համար պահանջվող միջոցների առկայությունը:
3. Օպերատորը, գտնվելով իր աշխատատեղում, պետք է հնարավորություն ունենա գործողության մեջ դնել մեքենայի շահագործման համար անհրաժեշտ կառավարման օրգանները: Բացառություն են կազմում միայն աշխատանքների այն տեսակները, որոնք, անվտանգության ապահովման նկատառումներով, պետք է կատարվեն օպերատորի աշխատատեղից դուրս տեղակայված կառավարման օրգանների օգնությամբ:
4. Անվավոր մեքենաների դեկային կառավարման համակարգը պետք է

կառուցված ու արտադրված լինի այնպես, որ նվազեցվի ղեկանիվի եւ կառավարման լծակի վրա լարումը, որն առաջանում է կառավարվող անիվների վրա արտաքին ներգործությունների հետեւանքով:

5. Դիֆերենցիալի բլոկավորման կառավարման օրգանը պետք է կառուցված ու տեղադրված լինի այնպես, որ մեքենայի շարժվելու ընթացքում հնարավոր լինի ապարակավորել դիֆերենցիալը:

Եթե արտադրական գործընթացների կատարման համար, տրված գործառույթների կատարման համար մեքենան սարքավորվում է դրա եզրաչափերը գերազանցող սարքավորումներով (օրինակ՝ կայունարարներով, սլաքներով եւ այլն), ապա օպերատորը պետք է հնարավորություն ունենա դրա շարժումից առաջ համոզվելու, որ այդ սարքավորումը գտնվում է մեքենայի տեղաշարժման ժամանակ վտանգ չառաջացնող՝ տրված դիրքում:

6. Շարժիչի գործարկման ժամանակ պետք է բացառվի մեքենայի ինքնաբերաբար շարժվելու հնարավորությունը:

Մեքենաները պետք է համապատասխանեն արագության նվազեցման, շարժականգի, արգելակման եւ անշարժ վիճակում պահման գործընթացներին ներկայացվող պահանջներին, որպեսզի ապահովվի անվտանգությունը շահագործման վիաստաթղթերով նախատեսված աշխատանքի ռեժիմներում, ծանրաբեռնվածության մակարդակում, շարժման արագության ժամանակ:

7. Օպերատորը կառավարման աշխատանքային օրգանի օգնությամբ պետք է հնարավորություն ունենա ինքնաշարժ մեքենան դանդաղեցնելու կամ ամբողջությամբ կանգնեցնելու: Եթե դա անհրաժեշտ է անվտանգության ապահովման համար, ապա կառավարման համակարգի անսարքության կամ էներգամատակարարման գործընթացի խախտման դեպքում մեքենաները պետք է սարքավորված լինեն շարժման արագությունը նվազեցնելու կամ անկախ ու հեշտ հասանելի կառավարման օրգանով մեքենան ամբողջությամբ կանգնեցնելու վթարային սարքվածքով:

Եթե դա անհրաժեշտ է անվտանգության ապահովման համար, ապա մեքենաները պետք է սարքավորված լինեն մեքենայի լրիվ անշարժությունն ապահովող կայանման արգելակով:

8. Մեքենայի կամ մեքենաների համակարգի հեռակառավարման անհրաժեշտության դեպքում կառավարման յուրաքանչյուր բլոկ պետք է հստակ նույնացվի այն մեքենայի հետ, որի համար այն նախատեսված է:

Հեռակառավարման համակարգը պետք է կառուցված ու արտադրված լինի այնպես, որ դրանով հնարավոր լինի կառավարել միայն համապատասխան մեքենան եւ (կամ) որոշակի գործողություններ:

Հեռակառավարման համակարգով սարքավորված մեքենան պետք է կառուցված ու արտադրված լինի այնպես, որ այն արձագանքի միայն կառավարման որոշակի բլոկի ազդանշաններին:

9. Կողքից քայլող օպերատորի կողմից կառավարվող մեքենայի շարժումը պետք է հնարավոր լինի միայն կառավարման համապատասխան օրգանների վրա օպերատորի կողմից անընդհատ ներգործության արդյունքում: Շարժիչի գործարկման ժամանակ պետք է բացառվի մեքենայի ինքնաբերաբար շարժվելու հնարավորությունը:

10. Կողքից քայլող օպերատորի կողմից կառավարվող մեքենայի կառավարման համակարգերը պետք է կառուցված լինեն այնպես, որ դեպի օպերատոր մեքենայի ինքնաբերաբար շարժման հետ կապված ռիսկերը հասցեն նվազագույնի:

Մեքենայի շարժման արագությունը պետք է համադրելի լինի կողքից քայլող օպերատորի շարժման արագության հետ:

Եթե մեքենան հանդերձված է պտտվող գործիքով, ապա մեքենայի հետընթաց շարժման ժամանակ այն միացնելու ցանկացած հնարավորություն պետք է բացառվի, բացառությամբ այն դեպքերի, երբ մեքենան դրվում է շարժման մեջ հենց այդ պտտվող գործիքով: Վերջին դեպքում մեքենայի

հետընթաց շարժման արագությունը չպետք է վտանգավոր լինի օպերատորի համար:

Ղեկային կառավարման Էներգիայի աղբյուրի խափանումը (առկայության դեպքում) չպետք է խոչընդոտի մեքենայի կառավարումը դրա ամբողջական շարժականգի համար անհրաժեշտ ողջ ժամանակահատվածում:

11. Մեքենան պետք է կառուցված, արտադրված եւ անհրաժեշտության դեպքում շասսիի վրա տեղադրված լինի այնպես, որ շարժման ընթացքում դրա ծանրության կենտրոնում առաջացող անկառավարելի տատանումները չազդեն մեքենայի կայունության վրա եւ չափից ավելի չճանրաբեռնեն դրա կոնստրուկցիան:

Ինքնաշարժ մեքենան պետք է կառուցված ու արտադրված լինի այնպես, որ շահագործման նախատեսված պայմաններում դրա կայությունը պահպանվի:

12. Եթե շահագործման նախատեսվող պայմաններում առկա է ինքնաշարժ մեքենայի շրջվելու ռիսկ, ապա այն պետք է սարքավորվի շրջվելու դեպքում պաշտպանական սարքվածքով: Մեքենայի շրջվելու դեպքում տվյալ սարքվածքի կոնստրուկցիան մեքենայում գտնվող օպերատորի համար պետք է ապահովի դեֆորմացիայի սահմանափակման համապատասխան ծավալը:

Մեքենայի նստատեղերը պետք է ունենան համապատասխան կոնստրուկցիա կամ հանդերձված լինեն պահող համակարգերով, որոնք օպերատորին թույլ կտան մնալ իր տեղում՝ առանց մեքենայի կառավարման համար անհրաժեշտ գործողությունների սահմանափակման:

13. Եթե, կախված ինքնաշարժ մեքենայի շահագործման պայմաններից, առկա է դրա վրա տարբեր առարկաներ ընկնելու ռիսկ, ապա այն պետք է սարքավորված լինի ընկնող առարկաներից պաշտպանական սարքվածքով:

Մեքենայի վրա առարկաներ ընկնելու դեպքում տվյալ սարքվածքի կոնստրուկցիան մեքենայում գտնվող օպերատորի համար պետք է ապահովի դեֆորմացիայի սահմանափակման համապատասխան ծավալը:

14. Քարշակման համար նախատեսված կամ քարշակվող մեքենաները պետք է սարքավորված լինեն կցաքարշակային սարքվածքով՝ կառուցված, արտադրված եւ տեղադրված այնպես, որ ապահովվի հեշտ ու անվտանգ միացումը եւ անջատումը, ինչպես նաև կանխվի պատահական անջատումն աշխատանքի ժամանակ:

15. Կիսակցորդ, կիսակախովի մեքենաները պետք է սարքավորված լինեն ծանրաբեռնվածության ու գրունտի պայմաններին համապատասխանող հենարանային մակերեւություններով կանգնակներով:

16. Հզորության արտարկման կախովի մեխանիկական սարքվածքները, որոնցով ինքնաշարժ մեքենաները (տրակտորները) միացվում են քարշակվող մեքենաների առաջին կոշտ հենարաններին, պետք է կառուցված ու արտադրված լինեն այնպես, որ գործառման ժամանակ ցանկացած շարժական մանրակ ամբողջությամբ պաշտպանված լինի:

Ինքնաշարժ մեքենայի (տրակտորի) հզորության արտարկման լիսեռը, որին միացվում է հզորության արտարկման հանովի մեխանիկական սարքվածքը, պետք է պաշտպանված լինի ինքնաշարժ մեքենային (տրակտորին) ամուր փակցվող հատուկ պաշտպանակով կամ պաշտպանության համարժեք մակարդակ ապահովող ցանկացած այլ հարմարանքով:

Հզորության արտարկման հանովի սարքվածքի հասանելիությունն ապահովելու համար տվյալ պաշտպանակը պետք է բացվելու հնարավորություն ունենա: Վերոնշյալ սարքվածքի տեղադրման ժամանակ պետք է մնա բավարար տարածք, որպեսզի ինքնաշարժ մեքենայի (տրակտորի) շարժման ժամանակ կարդանախեռը չվնասի պաշտպանակը:

Քարշակվող մեքենայի հզորության ընդունման լիսեռը պետք է դրված լինի դրա վրա ամրակցված պաշտպանիչ պատյանի մեջ:

Ոլորող մոմենտի սահմանափակիչները կամ վազանցիկ կցորդիչները պետք է միացված լինեն կարդանախեռի ունիվերսալ հոդակապին՝ միայն քարշակվող

մեքենայի կողմից: Հզորության արտարկման հանովի մեխանիկական սարքվածքը պետք է ունենա համապատասխան մակնշում:

17. Այն բոլոր քարշակվող մեքենաները, որոնց աշխատանքի համար անհրաժեշտ է հզորության արտարկման հանովի մեխանիկական սարքվածք՝ դրանք ինքնաշարժ մեքենաներին (տրակտորներին) միացնելու համար, պետք է ունենան միացման այնպիսի համակարգ, որպեսզի մեքենաների անջատման անհրաժեշտության դեպքում գետնի կամ մեքենաների մանրակների հետ հպումից այդ սարքվածքն ու դրա պաշտպանակները չվնասվեն:

Պաշտպանակների արտաքին մասերը պետք է կառուցված, արտադրված եւ տեղադրված լինեն այնպես, որդրանք չշրջվեն հզորության արտարկման հանովի մեխանիկական սարքվածքի հետ միասին: Պաշտպանակը չպետք է ծածկի կարդանալիսեռը մինչեւ ներքին հոդակապերի երկժանիների ծայրի հատվածը (հասարակ ունիվերսալ հոդակապերի դեպքում), իսկ լայնանկյուն ունիվերսալ հոդակապերի դեպքում՝ ոչ պակաս, քան արտաքին հոդակապի կեսը:

Եթե մեքենայի մեջ աշխատանքային տեղերին հասնելու միջոցները տեղակայված են հզորության արտարկման հանովի մեխանիկական սարքվածքի կողքին, ապա դրանք պետք է կառուցված ու արտադրված լինեն այնպես, որ բացառվի կարդանալիսեռի պաշտպանակը որպես աստիճան օգտագործելու հնարավորությունը, բացի այն դեպքերից, երբ դա նախատեսված է կոնստրուկցիայով:

18. Կուտակչային մարտկոցների տեղակայման մասերը պետք է կառուցված ու արտադրված լինեն այնպես, որ բացառվի մեքենայի շրջվելու դեպքում օպերատորի վրա էլեկտրոլիտի ընկնելու պատճառով առաջացած վտանգը եւ խուսափել օպերատորի աշխատանքային տեղում էլեկտրոլիտի գոլորշու կուտակումից:

Մեքենան պետք է կառուցված ու արտադրված լինի այնպես, որ կուտակչային մարտկոցները հնարավոր լինի անջատել հեշտ հասանելի եւ

հատուկ այդ նպատակի համար նախատեսված սարքվածքի (անջատիչի) օգնությամբ:

19. Կախված վտանգների տեսակներից՝ մեքենան պետք է սարքավորված լինի հեշտ հասանելի տեղերում տեղակայված կրակմարիչներով եւ (կամ) հրդեհաշիջման ներկառուցված համակարգերով:

20. Օպերատորը պետք է պաշտպանված լինի իր վրա վտանգավոր նյութերի ներգործության ռիսկից, եթե մեքենայի հիմնական գործառույթը դրանց փոշիացումն է:

21. Օպերատորների տեղերով սարքավորված մեքենաները պետք է հանդերձված լինեն քարշակող մեքենայից քարշակվող մեքենային ազդանշանների փոխանցման համապատասխան սարքվածքով (անհրաժեշտության դեպքում):

22. Գյուղատնտեսական մեքենաների օպերատորների աշխատանքային տեղը, որը ագրեգատի աշխատանքի ժամանակ գտնվում է Էներգետիկ միջոցի խցիկից դուրս, պետք է պաշտպանված լինի հողի, տեխնոլոգիական նյութի, կեղտի արտանետումից:

23. Տրանսպորտային լայնության եւ (կամ) երկարության նվազեցման համար նախատեսված ծանրված տարրերը պետք է ունենան մեխանիկական կամ այլ միջոցներ՝ դրանք տրանսպորտային դիրքում պահելու համար:

24. Լեռնային պայմաններում աշխատանքի համար նախատեսված ինքնաշարժ մեքենաներն ու էներգետիկ միջոցները պետք է սարքավորված լինեն սահմանային թույլատրելի կողաթեքման ազդանշանիչներով:

25. Կախովի, կիսակախովի, կցվող, կիսակցվող ու տեղադրվող գյուղատնտեսական մեքենաների նկատմամբ սահմանվող անվտանգության պահանջները գնահատվում են կախովի, կիսակախովի, կցվող, կիսակցվող ու տեղադրվող մեքենայից ու Էներգետիկ միջոցից (տրակտորից) մեքենատրակտորային ագրեգատի կազմում փորձարկումների ժամանակ:

26. Եթե ինքնաշարժ մեքենաներն ու էներգետիկ միջոցները նախատեսված են վտանգավոր շրջակա միջավայրում կիրառման համար կամ հենց մեքենաներն ու էներգետիկ միջոցներն են վտանգավոր շրջակա միջավայրի պատճառը, ապա պետք է նախատեսվեն համապատասխան սարքածքներ օպերատորի բնականոն աշխատանքի եւ կանխատեսելի վտանգներից նրան պաշտպանելու համար:

27. Օպերատորի աշխատանքային տեղը խցիկով սարքավորելու դեպքում այն պետք է մեքենան արագ լքել հնարավորություն ստեղծի օպերատորի համար եւ ունենա առնվազն մեկ վթարային ելք:

28. Էներգետիկ միջոցի հետ միացվող մեքենաները, որոնք տրանսպորտային դիրքում փակում են էներգետիկ միջոցի գունագրանշանային սարքերը, ինչպես նաև ինքնաշարժ մեքենաները պետք է սարքավորվեն սեփական գունային սարքերով:

## **Բեռնամբարձ մեքենաներ**

1. Բեռնամբարձ մեքենաները պետք է կառուցված ու արտադրված լինեն այնպես, որ դրանց շահագործման ընթացքում (աշխատանքային ու ոչ աշխատանքային վիճակներում), ինչպես նաև կենսական պարբերաշրջանի մնացած փուլերում (արտադրություն, մոնտաժում, փորձարկումներ, ապամոնտաժում եւ այլն) դրանք պահպանեն ներկայացված երկրաչափական ձեւը, ամրությունը, կոշտությունը, կայունությունը, մաշվածության ու քայլքայման նկատմամբ կայունությունը, ինչպես նաև հավասարակշռությունը (վերջինը միայն դարպասային կոռունկների որոշ տեսակի սլաքների համար):

Մետաղակառուցվածքի հաշվարկային տարրերի ամրությունը, կոշտությունը, կայունությունն ու հավասարակշռությունը, ինչպես նաև բեռնամբարձ մեքենայի մեխանիզմների անվտանգության համապատասխան ցուցանիշները պետք է հաստատված լինեն հաշվարկով՝ հաշվի առնելով աշխատանքի ռեժիմները:

2. Ռելային ուղիով տեղաշարժվող բեռնամբարձ մեքենաները պետք է սարքավորված լինեն ռելային ուղուց դրանց արտանկման ռիսկը, ինչպես նաև հողմային բեռնվածքի ազդեցության տակ չթույլատրված տեղափոխումը կանխող հատուկ սարքվածքներով:

Եթե չնայած նշված սարքվածքների առկայությանը, կա ռելային ուղուց արտանկման ռիսկ, օրինակ՝ հնարավոր սեյսմիկ ազդեցության կամ հենց ռելային ուղու կոտրման պատճառով, անհրաժեշտ է կիրառել սարքավորման հնարավոր ընկնելը կանխող լրացուցիչ հարմարանքներ:

3. Բեռնամբարձ մեքենաները պետք է կառուցված ու արտադրված լինեն շահագործման նախատեսված պայմանների, աշխատանքի ժամանակի ու մեխանիզմների աշխատանքի ռեժիմի հաշվառմամբ: Ինտենսիվ տեխնոլոգիական գործընթացների սպասարկման համար նախատեսված բեռնամբարձ մեքենաների բարձրացման մեխանիզմները պետք է հանդերձված լինեն աշխատանքի արձանագրիչներով:

Աշխատանքի արձանագրիչներով (բեռնային մոմենտի սահմանափակիչներով) պետք է հանդերձված լինեն նաև սլաքային տեսակի բոլոր ազատ կանգնած բեռնամբարձ կոռունկները:

Բեռնամբարձ մեքենաների արտադրության համար օգտագործվող նյութերը պետք է ընտրվեն՝ հաշվի առնելով շահագործման նախատեսված այնպիսի պայմանները (աշխատանքային եւ ոչ աշխատանքային վիճակում), ինչպիսիք են ջերմաստիճանը, միջավայրի ագրեսիվությունը, միջավայրի պայմանակիրդեհավտանգությունը եւ այլն: Նյութերի որակը պետք է հաստատվի արտադրողի սերտիֆիկատներով:

4. Պողպատյա ճոպանների համար նախատեսված բլոկերն ու թմբուկները պետք է ունենան տրամագիծ, որը կլինի ոչ պակաս, քան այն մեխանիզմի դասակարգման խմբով որոշվող տրամագիծը, որում դրանք տեղակայված են: Թմբուկի վրա բլոկի ակոսն ու ակոսիկների պարուրակը պետք է

համապատասխանեն պողպատյա ճոպանի սահմանված տրամագծին:

Պողպատյա ճոպանի ընտրության հաշվարկային ուժը որոշվում է մեխանիզմի կոնստրուկցիայով՝ բազմաճախարակի պատիկության հաշվառմամբ: Պողպատյա ճոպանի օգտագործման նվազագույն գործակիցը (պահուստի գործակիցը) պետք է լինի ոչ պակաս, քան այն մեխանիզմի դասակարգման խմբով որոշվող տրամագիծը, որում ճոպանը տեղակայված է: Պողպատյա ճոպանի օգտագործման նվազագույն գործակիցը (պահուստի գործակիցը) առասանների յուրաքանչյուր առանձին ճյուղի համար պետք է լինի 6-ից ոչ պակաս՝ պայմանով, որ բազմաճյուղ առասանների ճյուղերի միջեւ առավելագույն անկյունը լինի  $90^{\circ}$ -ից ոչ ավելի: Բազմաճյուղ առասանների ճյուղերից յուրաքանչյուրի հաշվարկային բեռնվածքն ընդունում են՝ ելեկով այն պայմանից, որ բեռը պահվում է երեք կամ ավելի քիչ քանակով ճյուղերով:

Պողպատյա ճոպանները, որոնք ուղակիորեն նախատեսված են բեռի բարձրացման կամ պահման համար (բացի ճոպանուղու ճոպաններից ու օղակային առասաններից), չպետք է ունենան ոչ մի սերտակցում՝ բացի ճոպանների ծայրերի ամրակցումից:

Ծայրերի ամրակցման որակը եւ պողպատյա ճոպանների ամրացման եղանակն ընտրվում են մեխանիզմի ու ամբողջ բեռնամբարձ մեքենայի անվտանգության համապատասխան մակարդակը ապահովելու համար:

5. Աստղանիվների չափերը պետք է ընտրվեն՝ մեխանիզմի դասակարգման խմբի ու շղթայի քայլի հաշվառմամբ:

Շղթայի ընտրության հաշվարկային ուժը որոշվում է մեխանիզմի կոնստրուկցիայով՝ բազմաճախարակի պատիկության հաշվառմամբ: Շղթայի օգտագործման նվազագույն գործակիցը (պահուստի գործակիցը) պետք է լինի ոչ պակաս, քան այն մեխանիզմի դասակարգման խմբով որոշվող տրամագիծը, որում շղթան տեղակայված է:

Օղակային շղթայի ամրացման եղանակն ու ամրակցումն ընտրվում են

մեխանիզմի ու ամբողջ բեռնամբարձ մեքենայի անվտանգության համապատասխան մակարդակն ապահովելու համար:

Շղթայի օգտագործման նվազագույն գործակիցը (պահուստի գործակիցը) առասանների յուրաքանչյուր առանձին ճյուղի համար պետք է լինի 4-ից ոչ պակաս՝ պայմանով, որ բազմաճյուղ առասանների ճյուղերի միջեւ առավելագույն անկյունը լինի  $90^{\circ}$ -ից ոչ ավելի: Բազմաճյուղ առասանների ճյուղերից յուրաքանչյուրի հաշվարկային բեռնվածքն ընդունում են՝ ելելով այն պայմանից, որ բեռը պահպում է երեք կամ ավելի քիչ քանակով ճյուղերով:

Առասանների կոնստրուկցիայում մանածագործականնույթի ու ժապավենների օգտագործման դեպքում օգտագործման նվազագույն գործակիցը (պահուստի գործակիցը) մանածագործական ճոպանի ու ժապավենի առասանների յուրաքանչյուր առանձին ճյուղի համար պետք է լինի 7-ից ոչ պակաս՝ պայմանով, որ բազմաճյուղ առասանների ճյուղերի միջեւ առավելագույն անկյունը լինի  $90^{\circ}$ -ից ոչ ավելի:

Մանածագործական ճոպանների ու ժապավենների ամրակցումը (կարակցումը) չպետք է հանգեցնի տրված առասանի յուրաքանչյուր առանձին ճյուղի օգտագործման նվազագույն գործակցի նվազեցմանը:

6. Տեղափոխումների նկատմամբ հսկողության իրականացման համար նախատեսված սարքվածքները պետք է գործառվեն այնպես, որ այն բեռնամբարձ մեքենաները, որոնց վրա դրանք տեղակայված են, լինեն անվտանգ:

Բեռնամբարձ մեքենաները պետք է կառուցված, արտադրված կամ հանդերձված լինեն հատուկ սարքվածքներով, որոնք թույլ կտան սահմանափակել համապատասխան բաղադրիչների շարժումների ամպլիտուդը սահմանված սահմաններում: Անհրաժեշտության դեպքում տվյալ սարքվածքների աշխատանքի սկզբին պետք է տրվի նախազգուշացնող ազդանշան:

Եթե առանձին կանգնած ու ռելսային ուղիներով շարժվող բեռնամբարձ մեքենաները պատահմամբ կարող են անմիջապես մոտ գտնվել միմյանց,

առաջացնելով բախման վտանգ, ապա դրանք պետք է սարքավորված լինեն այնպիսի համակարգերով, որոնք թույլ կտան խուսափել այդպիսի ռիսկի առաջացումից:

Բեռնամբարձ մեքենաները պետք է կառուցված ու արտադրված լինեն այնպես, որ անհնար լինի վտանգավոր տեղաշարժը կամ դրանց վրա տեղադրված բեռների ազատ ու անկառավարելի ընկնելը, նույնիսկ եթե դրանց առաջացման պատճառն օպերատորի կողմից էներգիայի լրիվ կամ ժամանակավոր անջատումն է կամ մեքենայի շարժականգը:

Շահագործման բնականոն պայմաններում միայն սկավառակային արգելակների համակարգի օգտագործմամբ բերի իջեցման գործընթացը միակ հնարավոր եղանակն է՝ բացառությամբ այնպիսի մեքենաների, որոնք չեն կարող աշխատել այլ կերպ:

Բեռլ պահելու համար նախատեսված սարքվածքները պետք է կառուցված ու արտադրված լինեն այնպես, որ բացառվի բեռների պատահարար ընկնելու հնարավորությունը:

7. Բեռնամբարձ մեքենայի աշխատանքային դիրքը պետք է լինի այնպիսին, որ ապահովվի դրա շարժական մասերի շարժման հետագծի հնարավոր լայն տեսադաշտը մարդկանց, սարքավորումների կամ միեւնույն ժամանակ միմյանց անմիջապես մոտ տեղաշարժվող եւ որոշակի վտանգ ստեղծող այլ մեքենաների հետ բախումից խուսափելու համար:

Ուլսային ուղիներով տեղաշարժվող բեռնամբարձ մեքենաները պետք է կառուցված ու արտադրված լինեն այնպես, որ մարդկանց պաշտպանեն այնպիսի վնասվածքներից, որոնց առաջացումը կապված է բեռների, տրանսպորտային պլատֆորմաների կամ հակածանրութիւն հետ (առկայության դեպքում): Անհրաժեշտության դեպքում այդ պահանջի կատարման համար տեղափոխման գոտու մուտքը պետք է բացառվի շահագործման բնականոն պայմաններում:

Եթե հսկողության կամ տեխնիկական սպասարկման ընթացքում կա որևէ

անշարժ տարրի ու տրանսպորտային պլատֆորմայի միջեւ դրանից ներքեւ կամ վերեւ գտնվող մարդու մարմնի մասերի ճզմման վտանգ, ապա անհրաժեշտ է ապահովել բավարար ազատ տարածություն ծածկոցի տեսքով կամ ապահովել տրանսպորտային պլատֆորմայի տեղափոխումը բլոկավորող մեխանիկական սարքվածքների տեղադրումը:

8. Բաց հրապարակներում սպասարկող բեռնամբարձ մեքենայի տրանսպորտային պլատֆորմայի տեղափոխումը պետք է իրականացվի կոչտ ուղղորդիչներով: Մկրատների տեսքով հոդակապային մեխանիզմով ամբարձիչ համակարգերը նույնպես դիտվում են որպես կոչտ ուղղորդիչներով համակարգեր:

Եթե մարդիկ մուտք ունեն դեպի տրանսպորտային պլատֆորմա, ապա բեռնամբարձ մեքենան պետք է կառուցված ու արտադրված լինի այնպես, որ մուտքի դեպքում ապահովվի տրանսպորտային պլատֆորմայի անշարժ վիճակը, մասնավորապես, բեռնման կամ բեռնաթափման ժամանակ:

Բեռնամբարձ մեքենան պետք է կառուցված ու արտադրված լինի այնպես, որ տրանսպորտային պլատֆորմայի եւ այն սպասարկող վայրէջքի հրապարակի մակարդակների միջեւ եղած տարբերությունը սայթաքելու կամ ընկնելու վտանգ չառաջացնի:

9. Եթե կա տրանսպորտային պլատֆորմայից բերի ընկնելու վտանգ, ապա բեռնամբարձ մեքենան պետք է կառուցված ու արտադրված լինի այնպես, որ այդպիսի ռիսկի առաջացումը բացառվի:

10. Նստեցման (իջեցման) վայրերում (բեռնման, բեռնաթափման) պետք է բացառվի մարդկանց հպումը շարժվող պլատֆորմայի կամ բեռնամբարձ մեքենայի՝ շարժման մեջ գտնվող այլ մասերի հետ:

Եթե կա տրանսպորտային պլատֆորմայի շարժման գոտում՝ իջեցման (բեռնման–բեռնաթափման) հրապարակում դրա բացակայության պահին մարդկանց ընկնելու հավանականության ռիսկ, ապա պետք է նախատեսվեն

այդպիսի ռիսկի առաջացման հնարավորությունը բացառող պաշտպանակներ: Այդպիսի պաշտպանակները չեն տք է բացվեն տրանսպորտային պլատֆորմայի շարժման գոտու ուղղությամբ: Դրանք պետք է ունենան պաշտպանիչ սարքվածք բլոկավորումով, որն սկսում է աշխատել՝ կախված տրանսպորտային պլատֆորմայի զբաղեցրած դիրքից եւ կանխում է տրանսպորտային պլատֆորմայի վտանգավոր շարժումն այնքան ժամանակ, մինչեւ պաշտպանակները չլինեն փակված կամ բլոկավորված, իսկ պաշտպանակը պետք է բացվի մինչեւ տրանսպորտային պլատֆորմայի՝ համապատասխան իջեցման (բեռնման–բեռնաթափման) հրապարակում կանգնելը:

11. Բեռնամբարձ մեքենաների աշխատունակության հաստատման համար դրանք պետք է պարբերաբար ենթարկվեն բեռնային ստատիկական ու դինամիկական փորձարկումների՝ անձնագրային բեռնամբարձության 1,25 բեռնվածքով (ստատիկական փորձարկումներ) եւ անձնագրային բեռնամբարձության 1,1 բեռնվածքով (դինամիկական փորձարկումներ): Բեռնային փորձարկումների անցկացման մեթոդիկան պետք է ներկայացվի բեռնամբարձ մեքենայի շահագործման ձեռնարկի մեջ:

Նորից արտադրված բեռնամբարձ մեքենաները (սլաքային տեսակի ազատ կանգնած կոռունկները) ենթարկվում են լրացուցիչ փորձարկումների՝ շրջվելու դեպքում ընդհանուր կայունության նկատմամբ: Փորձարկումների անցկացման մեթոդիկան պետք է ներկայացվի բեռնամբարձ մեքենայի շահագործման ձեռնարկի մեջ:

12. Ձեռքով գործի դրվող բեռնամբարձ մեքենաների կառավարման սարքվածքները պետք է ավտոմատ կերպով վերադառնան նախնական դիրքի: Սակայն տեղափոխման մի մասի կամ ամբողջ գործընթացի կարգավորման ժամանակ, որի դեպքում ամբողջությամբ բացակայում է բեռների կամ մեքենաների բախման վտանգը, կառավարման նշված սարքվածքները կարող են փոխարինվել այնպիսի հատուկ սարքվածքներով, որոնց շնորհիվ հնարավոր կլինի ավտոմատ շարժականգը նախապես տրված դիրքերով՝ առանց ավտոմատ

կերպով նախնական դիրքին վերադառնալու սարքվածքի օգտագործման:

Ճոպանային տրանսպորտային պլատֆորմաները, քարշակող միջոցները պետք է պահպեն հակածանրությով կամ այնպիսի սարքվածքով, որը թույլ կտա վերահսկել լարվածությունը:

13. Բեռնամբարձ շղթայի, ճոպանի կամ առասանի հավաքման միավոր չհանդիսացող յուրաքանչյուր մաս պետք է ունենա իր վրա գետեղված մակնշում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ցուցանակ կամ ոչ հանովի օղակ՝ նշելով արտադրողի անվանումն ու հասցեն:

Բեռնամբարձ շղթաները, պողպատյա ճոպանները, մանածագործական ճոպաններն ու ժապավենները պետք է ունենան վկայական, որտեղ ներառված կլինի հետեւյալ տեղեկատվությունը՝

- արտադրողի անվանումը եւ հասցեն.
- շղթայի, պողպատյա ճոպանի, մանածագործական ճոպանի կամ ժապավենի մակնիշը, որը ներառում է անվանական չափը, կոնստրուկցիան եւ նյութի վերաբերյալ տվյալներ.
- փորձարկումներ անցկացնելու օգտագործված մեթոդը,
- իզման (կամ քայլայման) նվազագույն բեռնվածքը:

Տվյալ վկայականի ձեւը հաստատում է Մաքսային միության հանձնաժողովը:

14. Բոլոր բեռնակալիչ հարմարանքների վրա պետք է նշվի այն նյութի անվանումը, որի համար դրանք նախատեսված են (եթե այդ տեղեկատվությունն անհրաժեշտ անվտանգ շահագործման համար), եւ թույլատրելի առավելագույն բեռնամբարձությունը:

Այն բեռնակալիչ հարմարանքների դեպքում, որոնց վրա հնարավոր չէ գետեղել մակնշում, վերոնշյալ տեղեկատվությունը պետք է գետեղվի դրանց վրա հուսալիորեն ամրացված ցուցանակի վրա կամ այնպիսի վայրում, որտեղ դրա քերվելու (օրինակ՝ մաշվածության արդյունքում) կամ բեռնակալիչ

հարմարանքների ամրության վրա բացասական ազդեցության վտանգը ամենաքիչն է, եւ պետք է լինի հստակ տարրերվող:

15. Յուրաքանչյուր բեռնամբարձ մեքենայի վրա պետք է նշվի դրա առավելագույն բեռնամբարձությունը՝ ըստ անծնագրի, իսկ սլաքային տեսակի կոռուկների համար պետք է տեղադրվի լրացուցիչ ցուցանակ՝ բեռնային բնութագրերով:

Բացառապես բեռների վերհանման համար նախատեսված բեռնամբարձ մեքենաները, որոնք սարքավորված են այնպիսի տրանսպորտային պլատֆորմաներով, որոնցում նախատեսված է մարդկանց մուտքի հնարավորությունը, պետք է հստակ կերպով գետեղված լինի մարդկանց վերհանումը արգելող նախազգուշացում: Այդ նախազգուշացումը պետք է լավ տեսանելի լինի ցանկացած վայրից, որտեղից հնարավոր է մուտք գործել տրանսպորտային պլատֆորմաներ, եւ պետք է պահպանվի մեքենայի ծառայության ամբողջ ժամկետի ընթացքում:

16. Բեռնամբարձ մեքենայի մեխանիզմները պետք է ապահովված լինեն նորմալ փակ տեսակի արգելակներով (բացի շրջադարձի մեխանիզմի արգելակներից, որոնք կարող են նորմալ անջատվել):

Բեռնամբարձ մեքենայի վերհանման մեխանիզմի արգելակման պահի պաշարի գործակիցը նշանակվում է՝ հաշվի առնելով մեխանիզմի դասակարգման խումբը, սակայն այն չպետք է լինի 1,5-ից պակաս:

Վտանգավոր բեռների վերհանման ու տրանսպորտային փոխադրման համար նախատեսված բեռնամբարձ մեքենաների վերհանման մեխանիզմները պետք է հանդերձված լինեն երկու արգելակով, ընդ որում դրանցից յուրաքանչյուրի արգելակման պահի պաշարի գործակիցը նշանակվում է՝ ելնելով տրված անվտանգության ապահովման պահանջներից:

17. Բեռնամբարձ մեքենայի բեռնակալիչ օրգանները պետք է համապատասխանեն տրված անվտանգության ապահովման պահանջներին եւ

խոչընդոտեն վերհանման ու տրանսպորտային փոխադրման, այդ թվում՝ կառավարման համակարգի խափանումների ժամանակ, ինքնաբերական անջատումը, ընկնելը կամ բեռների թափիվելը:

Բեռնային կեռերը, բացառությամբ հատուկ կատարման կեռերի, պետք է տեղադրվեն գլորման հենակային առանցքակալերի վրա:

Կախոցի վրա կեռի ամրացման դեպքում շահագործման ժամանակ պետք է ամբողջությամբ բացառվի դրա չթույլատրված անջատումը կախոցից:

Բեռնամբարձ մեքենայի յուրաքանչյուր կեռ պետք է ապահովված լինի մղակով, որը կիսոչընդունի բեռի վերհանման ու տրանսպորտային փոխադրման ժամանակ առասանի, օղակի կամ կեռի բացվածքի բլթանցքի ինքնաբերաբար ընկնելուն:

18. Բեռնամբարձ մեքենայի էլեկտրասարքավորումներն ու կառավարման համակարգը պետք է համապատասխանեն տրված անվտանգության ապահովման ու դրա վրա տեղադրված մեխանիզմների դասակարգման խմբի պահանջներին:

Բեռնամբարձ մեքենայի կառավարման համակարգը առնվազն պետք է սարքավորված լինի զրոյական ու հոսանքային պաշտպանությամբ, բացառի մեխանիզմների շարժաբերերի չթույլատրված գործարկումը, ինչպես նաև անձնակազմի՝ էլեկտրական հոսանքով վնասվելու հնարավոր վտանգը:

19. Բեռնամբարձ մեքենայի հիդրոսարքավորումները պետք է համապատասխանեն տրված անվտանգության ապահովման պահանջներին, բացառեն հիդրոշարժաբերի տարրերի վնասումը մետաղակառուցվածքի տարրերի հետ հպման ժամանակ ու բացառեն վթարային իրավիճակներում բեռի (սլաքի) ինքնաբերական իջեցումը:

Յուրաքանչյուր հիդրավլիկ հաղորդաշղթա պետք է պաշտպանված լինի ապահովիչ կափույրի ճնշման բարձրացումից, որը կարգավորված է, անձնագրային բեռնամբարձությանը համապատասխանող ու կապարակնքված

անվանական բեռների հետ աշխատելու համար:

20. Բեռնամբարձ մեքենաները պետք է հանդերձված լինեն անվտանգության անհրաժեշտ սարքերով՝ սահմանափակիչներով (օրինակ՝ աշխատանքային շարժումների սահմանափակիչներով, խցիկի մուտքի դռների անհրաժեշտ բլոկավորումներով եւ այլն) եւ ցուցիչներով (օրինակ՝ սնուցման լարվածության առկայության գունային ցուցանշումով, կշռող սարքավորանքներով, վերհանման ու տրանսպորտային փոխադրման սկիզբն ազդարարող ձայնային ազդանշանով եւ այլն): Բեռնամբարձ մեքենայի անհրաժեշտ սահմանափակիչների ու ցուցիչների ցանկը եւ քանակն ընտրվում է՝ ելնելով դրա կոնստրուկտիվ առանձնահատկություններից, պատասխանատվության աստիճանից ու անվտանգության ապահովմանհամար պահանջվող մակարդակից:

21. Բեռնամբարձ մեքենայի կառավարման ապարատները պետք է կատարվեն ու տեղադրվեն այնպես, որ կառավարումը լինի հարմար եւ չդժվարացնի հսկողությունը բեռնակալիչ օրգանի ու բեռի նկատմամբ:

Բոնակների ու լծակների տեղափոխման ուղղությունը պետք է հնարավորինս համապատասխանի մեխանիզմների շարժման ուղղությանը:

22. Բեռնամբարձ մեքենայի խցիկների ներքին չափերը պետք է բավարարեն տվյալ սարքավորման համար սահմանված՝ էրգոնոմիկայի ու անվտանգության պահանջները:

23. Բեռնամբարձ մեքենայի հեշտ հասանելի ու շարժման մեջ գտնվող մասերը պետք է փակված լինեն այնպիսի հանովի ամուր փակողներով, որոնց դեպքում մեխանիզմների զննումն ու սպասարկումը հնարավոր է:

Բեռնամբարձ մեքենաների ելեկտրասարքավորման չմեկուսացված հոսանքատար մասերը, որոնք տեղադրված են այնպիսի վայրերում, որտեղ հնարավոր է դրանց հպվել, պետք է լինեն պարսպված:

24. Բեռնամբարձ մեքենաների սրահները, հարթակները ու աստիճանները պետք է ապահովեն տրված ամրությունը, իսկ դրանց չափերը՝

համապատասխանեն անվտանգության սահմանված պահանջներին:

25. Բեռնամբարձ մեքենաների մետաղակառուցվածքի եռակցման միացումները պետք է ապահովեն դրանց անվտանգությունը:

26. Ռելսային ռուին (ռելսային ռուղով տեղաշարժվող բեռնամբարձ մեքենաների դեպքում) պետք է կառուցված ու արտադրված լինի այնպես, որ շահագործման ընթացքում (աշխատանքային եւ ոչ աշխատանքային վիճակներում), ինչպես նաև բեռնամբարձ մեքենայի կենսական պարբերաշրջանի մնացած փուլերում (մոնտաժում, փորձարկումներ եւ այլն) պահպանի հայտարարված ամրությունը, կոշտությունը, կայունությունը, հոգնածությունը, մաշվածության ու քայլայման նկատմամբ կայունությունը:

**Սննդամթերքի մշակման ու վերամշակման, կոսմետիկ միջոցների կամ դեղագործական պարտրաստուկների արտադրության համար նախատեսված սարքավորումները**

1. Սննդամթերքի, կոսմետիկ միջոցների կամ դեղագործական պատրաստուկների հետ հպում ունեցող նյութերը պետք է լինեն պիտանի՝ ըստ նշանակության օգտագործման համար: Նյութերի մակերեսներն ու դրանց պատվածքները պետք է կայուն լինեն այն միջավայրերի նկատմամբ, որոնց հետ դրանք հպվում են, եւ ապահովեն դրանց մաքրման ու ախտահանման հնարավորությունը՝ առանց քայլայման, ճեղքերի առաջացման, կոտրումների, շերտազատման կամ քերվելու:

2. Սննդամթերքի, կոսմետիկ միջոցների կամ դեղագործական պատրաստուկների հետ հպում ունեցող սարքավորումների մակերեսները պետք է լինեն հարթ, առանց ելունների կամ խորացումների, որոնք նպաստում են մթերքի կուտակմանը:

Սարքավորումները պետք է հեշտությամբ մաքրվեն ու ախտահանվեն (անհրաժեշտության դեպքում հեշտ հանվող բոլոր մանրակների նախնական

հեռացման ժամանակ):

Սարքավորումների ներքին մակերեսները պետք է ունենան շառավղային կցորդում, որը հնարավորություն կտա մանրամասն մաքրելու դրանք:

3. Անհրաժեշտ է, որ սննդամթերքից, կոսմետիկ միջոցներից կամ դեղագործական պատրաստուկներից բաց թողնվող ինչպես նաև մաքրման ու ախտահանման արդյունքում առաջացող հեղուկները, գազերը եւ աերոզոլները հնարավոր լինի ամբողջությամբ հեռացնելու սարքավորումներից:

4. Սարքավորումները պետք է կառուցված ու արտադրված լինեն այնպես, որ դրանց մեջ կողմնակի նյութեր ու վնասատուներ (օրինակ՝ միջատներ) չընկնեն, եւ մաքրման համար անհասանելի վայրերում օրգանական նյութեր չկուտակվեն:

5. Սարքավորումները պետք է կառուցված ու արտադրված լինեն այնպես, որ բացառի առողջության համար վտանգավոր օժանդակ նյութերի (օրինակ՝ քսուքների) հպումը սննդամթերքի, կոսմետիկ միջոցների կամ դեղագործական պատրաստուկների հետ:

6. Սարքավորումների շահագործման ձեռնարկի (հրահանգի) մեջ պետք է ներառվի տեղեկատվություն մաքրման, ախտահանման եւ լվացման միջոցների ու մեթոդների վերաբերյալ:

### Հավելված թիվ 3

«Մեքենաների եւ (կամ) սարքավորումների  
անվտանգության մասին» Մաքսային  
միության տեխնիկական կանոնակարգի

(ՄՄ ՏԿ 010/2011)

**Մաքսային միության «Մեքենաների եւ սարքավորումների անվտանգության  
մասին» տեխնիկական կանոնակարգի պահանջներին  
համապատասխանության հավաստման ենթակա՝ տեխնիկական  
կանոնակարգման օբյեկտների ցանկը՝ սերտիֆիկացման ձեւով:**

1. Հաստոցներ փայտամշակման կենցաղային
2. Զյունաճահճագնացներ, ձյունագնացներ ու դրանց կցորդները:
3. Սարքավորումներ ավտոտնակային, ավտոտրանսպորտային միջոցների եւ կցորդների համար
4. Մեքենաներ գյուղատնտեսական:
5. Փոքր մեխանիզացման միջոցներ այգեբանջարանոցային ու անտառատնտեսական կիրառման՝ մեքենայացված, այդ թվում՝ էլեկտրական:
6. Մեքենաներ անասնապահության, թռչնաբուծության եւ կերարտադրության համար:
7. Գործիք՝ մեքենայացված, այդ թվում՝ էլեկտրական:
8. Սարքավորումներ տեխնոլոգիական՝ փայտամթերման, փայտաբորսայի եւ փայտալուղարկման համար՝
  - սղոցներ բենզինաշարժիչավոր,
  - սղոցներ շղթայական էլեկտրական:

9. Սարքավորումներ տեխնոլոգիական, առեւտրի, հանրային սննդի եւ սննդի բլոկների համար

10. Ծածկաշերտային ու մաքրման աշխատանքների եւ հանքափորվածքի ամրակապման համար նախատեսված սարքավորումներ՝

- կոմբայններ մաքրիչ,
- կոմպլեքսներ մեքենայացված,
- ամրակապեր մեքենայացված՝ լավաների համար,
- օդաճնշական (պնեմա) գործիք:

11. Հանքափորվածքի հորատանցման համար նախատեսված սարքավորումներ՝

- կոմբայններ հորատանցային՝ ածխի եւ ապարի,  
- ամրակապեր մետաղական նախապատրաստական փորվածքների համար:

12. Սարքավորումներ հիմնանցքային վերհանների ու հորանային տրանսպորտի՝

- փոխարկիչներ հանքահորային քերակային:
- փոխարկիչներ հանքահորային քերակային:
- կարապիկներ հանքահորային եւ հանքային:

13. Սարքավորումներ պայթանցքների ու հորատանցքերի հորատման համար, սարքավորումներ պայթեցման հորատանցքերի լիցքավորման ու հորատման համար՝

- հողատիչներ օդաճնշիչ (հորատամուրճեր),
- պնեմահարվածիչներ,
- հաստոցներ հորատացքերի հորատման համար հանքային

արդյունաբերության մեջ,

- կայանքներ հորատման:

14. Սարքավորումներ օդափոխման եւ փոշենստեցման համար՝

- օդափոխիչներ հորանային,
- փոշենրսման եւ փոշենստեցման միջոցներ,
- ճնշակներ թթվածնային:

15. Սարքավորումներ ամբարձիչ-տրանսպորտային, բեռնամբարձ

կոռունկներ:

**Մաքսային միության «Մեքենաների եւ սարքավորումների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության հավաստման ենթակա՝ տեխնիկական կանոնակարգման օբյեկտների ցանկը՝ համապատասխանության հավաստման ձեռու**

1. Տուրբիններ եւ կայանքներ գազատուրբինային:

2. Մեքենաներ քարշակչական:

3. Զարդիչներ:

4. Դիզել-գեներատորներ:

5. Բեռնամբարձ գործողությունների համար նախատեսված հարմարանքներ:

6. Փոխարկիչներ:

7. Բազմաճախարակներ էլեկտրական, ճոպանային եւ շղթայական:

8. Տրանսպորտ արտադրական հատակադիր անոելս:

9. Սարքավորումներ քիմիական, նավթագազավերամշակման:
10. Սարքավորումներ՝ պոլիմերային նյութերի վերամշակման համար:
11. Սարքավորումներ պոմպային (պոմպեր, ագրեգատներ եւ պոմպային կայանքներ):
12. Սարքավորումներ սառնածին, ճնշակային, սառնարանային, ավտոգեն, գազամաքրման՝
  - կայանքներ օդամեկուաիչ եւ նոսր գազերի,
  - ապարատուրա՝ գազերի եւ հեղուկների պատրաստման ու մաքրման համար, ապարատուրա կրիոգեն համակարգերի ու սարքվածքների ջերմափոխանակման ու զանգվածափոխանակման համար,
  - ճնշակներ (օդային եւ գազային շարժահաղորդ),
  - կայանքներ սառնարանային:
13. Սարքավորումներ՝ մետաղների գազաբոցային մշակման եւ արտադրատեսակների մետաղացման համար:
14. Սարքավորումներ գազագտիչ եւ փոշեռսիչ:
15. Սարքավորումներ ցելյուլոզաթղթային:
16. Սարքավորումներ թուղթ արտադրող:
17. Սարքավորումներ նավթահանքային, հորատման, հանքախուզական:
18. Սարքավորումներ տեխնոլոգիական եւ ապարատուրա՝ մեթենաշինության արտադրատեսակների վրա լաքաներկային պատվածքի գետեղման համար:
19. Սարքավորումներ՝ հեղուկ ամոնիակի համար:
20. Սարքավորումներ՝ խմելու ջրի պատրաստման եւ մաքրման համար
21. Հաստոցներ մետաղամշակման:

22. Դարբնամամլիչային մեքենաներ:
23. Սարքավորումներ փայտամշակման (բացի փայտամշակող կենցաղային հաստոցներից):
24. Սարքավորումներ տեխնոլոգիական՝ ծովման արտադրության համար:
25. Սարքավորումներ եռակցման ու գազաջերմային փոշեպատման համար:
26. Տրակտորներ արդյունաբերական:
27. Ավտոբեռնիշներ:
28. Հեծանիվներ (բացի մանկականներից):
29. Մեքենաներ հողափոր, հողաբարելավման աշխատանքների, բացահանքերի մշակման ու սպասարկման համար:
30. Մեքենաներ ճանապարհային, սարքավորումներ շինարարական խառնորդների պատրաստման համար:
31. Սարքավորումներ եւ մեքենաներ շինարարական:
32. Սարքավորումներ շինարարական նյութերի արդյունաբերության համար:
33. Սարքավորումներ տեխնոլոգիական փայտամթերման, փայտաբորսայի եւ փայտալուղարկման համար (բացի բենզինաշարժիչավոր ու շղթայական էլեկտրական սղոցներից):
34. Սարքավորումներ տեխնոլոգիական՝ տորֆային արդյունաբերության համար:
35. Սարքավորումներ լվացքատան արդյունաբերական:
36. Սարքավորումներ հագուստի եւ կենցաղային արտադրատեսակների քիմիական մաքրման եւ ներկման համար:
37. Մեքենաներ եւ սարքավորումներ կենցաղային տնտեսության համար:
38. Օդափոխիչներ արդյունաբերական:

39. Օդորակիչներ արդյունաբերական:

40. Օդաջեռուցիչներ եւ օդահովիչներ:

41. Սարքավորումներ տեխնոլոգիական՝ թեթեւ արդյունաբերության համար:

42. Սարքավորումներ                   տեխնոլոգիական՝                   մանածագործական  
արդյունաբերության համար

43. Սարքավորումներ                   տեխնոլոգիական՝ քիմիական                   մանրաթելերի,  
ապակեթելքի եւ ասբեստաթելերի մշակման համար:

44. Սարքավորումներ տեխնոլոգիական՝ մթերային, մսակաթնամթերքային  
եւ ձկնամթերքի արդյունաբերության համար:

45. Սարքավորումներ                   տեխնոլոգիական՝                   ալրաղացա-ձավարային,  
համակցված կերի, հացահատիկային արդյունաբերության համար:

46. Սարքավորումներ տեխնոլոգիական՝ առեւտրի, հանրային սննդի եւ  
սննդի բլոկների ձեռնարկությունների համար:

47. Սարքավորումներ պոլիգրաֆիական:

48. Սարքավորումներ                   տեխնոլոգիական՝ ապակու,                   ճենապակու,  
հախճապակու եւ մալուխային արդյունաբերության համար:

49. Կաթսաներ ջեռուցման, հեղուկ եւ պինդ վառելիքով աշխատող:

50. Այրիչներ՝ գազային եւ համակցված (բացի բլոկայիններից), հեղուկ-  
վառելիքային, որոնք տեղադրվում են այնպիսի սարքավորումների մեջ, որոնք  
նախատեսված են արդյունաբերական ձեռնարկություններում տեխնոլոգիական  
գործընթացներում օգտագործելու համար:

51. Ապարատներ ջրատաքացուցիչ եւ ջեռուցման, հեղուկ եւ պինդ  
վառելիքով աշխատող:

52. Ֆրեզներ՝

- ֆրեզներ բազմանիստ կարծրահամահալվածքային սալիկներով,
- ֆրեզներ կտրիչ եւ կտրող՝ արագահատ պողպատից,
- ֆրեզներ կարծրահամահալվածքային:

**53. Կտրիչներ՝**

- կտրիչներ խառատային՝ մակագոր կարծրահամահալվածքային սալիկներով
- կտրիչներ բազմանիստ կարծրահամահալվածքային սալիկներով,

**54. Սղոցներ հոլովակավոր՝ կարծրահամահալվածքային սալիկներով՝** փայտանյութի մշակման համար:

**55. Գործիք փականագործական-մոնտաժային մեկուսացնող բռնիչներով՝** մինչեւ 1000 Վ լարմամբ էլեկտրակայանքներում աշխատանքի համար:

**56. Ֆրեզներ հազցնովի՝**

- ֆրեզներ փայտակտրիչ հազցնովի ծոծրակված ատամներով,
- ֆրեզներ փայտակտրիչ հազցնովի պողպատից կամ պինդ համահալվածքից,
- ֆրեզներ հազցնովի գլանաձեւ հավաքովի:

**57. Գործիք բնական ու սինթետիկ ալմաստներից՝**

- շրջաններ ալմաստե, հղկման
- շրջաններ ալմաստե, կտրիչ:

**58. Գործիք սինթետիկ գորպինֆ նյութերից՝** բոռի նիտրիդի հիմքով (գործիք էլեկտրից)

- շրջաններ հղկման:

**59. Արմատուր արդյունաբերական խողովակաշարի:**

60. Գործիք հղկումային, նյութեր հղկումային՝

- շրջաններ հղկման, այդ թվում՝ ձեռքի մեքենաներ,
- շրջաններ կտրիչ,
- շրջաններ փայլեցման,
- շրջաններ հղկման թերթիկավոր,
- ժապավեններ հղկման ծայրափակ,
- սկավառակներ հղկման ֆիբրե: